

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

ԹՈՒՐԹԻԱՆ ՈՒ «ԱԴՐԲԵՉԱՆ»-ը՝ Պատերազմական ոճրագործ

**Դատապարտում ենք նրանց ռուս-ամերիկյան
հովանավորներին**



**Թալիշցի ծերունիները թուրք-ազերիական
ոճրագործության զոհ**

210, Ապրիլ 2016 թ. No 210, April 2016 شماره ۲۱۰ اردیبهشت ماه ۱۳۹۵

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստան.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	18
4- Մփյուռք.....	20
5- Միջազգային.....	25
6- Գծանկարչություն.....	27
7- Առածանի.....	27

Պարսկերեն բաժին

Լուրեր.....	0
Արցախի պատմություն.....	1-4
Իրանահայ թատրոն.....	5
Ծաղկազարդ.....	5

Ճապիկի առաջին էջում՝ Թուրք-ազերիական
ոճրագործություն

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 210, Ապրիլ 2016

No. 210, April 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۰ اردیبهشت ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդույան

Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

10 հարց Սերժ Սարգսյանին. «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի հայտարարությունը



Ապրիլյան «դիրքային պատերազմի» հետևանքով հայկական կողմը կրել է մարդկային, տարածքային, քաղաքական և նյութական կորուստներ:

Պետական պատկան մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունն է հնարավորինս բացառել նման ծանր հետևանքների առաջացումը, ինչպես նաև հնարավոր մասով ապահովել դրանց վերացումը:

«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի Քաղաքական խորհուրդն ուսումնասիրում է հակառակորդի հարձակմանը նախորդած շրջանում, դրա ընթացքում և ապրիլի 5-ից հաստատված փիլիսոփայության հրադարձից հետո տեղի ունեցող իրադարձությունների պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև իր հնարավորությունների չափով օժանդակում է երկրի պաշտպանության գործին:


Քաղաքական խորհուրդը, հիմնվելով այն հանրահայտ իրողությունների վրա, որ իշխանության կրողը ժողովուրդն է և նա է իր մասը կազմող բանակի հետ միասին ապահովում երկրի պաշտպանությունն ու կրում դրա հետևանքները, ուսումնասիրել է նաև տեղի ունեցողի վերաբերյալ ժողովրդի շրջանում առկա տրամադրությունները և կարծիքները:

Ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ժողովրդի գերակշիռ մեծամասնության համոզմամբ՝ հակառակորդի հարձակումը նման ծանր հետևանքների չէր հանգեցնի և դրանք հնարավոր կլինեին վերացնել շատ ավելի կարճ ժամանակահատվածում ու նվազ ջանքերով, եթե պատկան մարմիններն ու պաշտոնատար անձինք ինչպես հարձակումից առաջ, այնպես էլ դրա ընթացքում և հետագա օրերին պատշաճ կերպով կատարեին իրենց գործառնություններն ու պարտականությունները:

Պատկան մարմինները և պաշտոնատար անձինք, առաջին հերթին՝ Նախագահի և Չինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոններն զբաղեցնող անձը, պարտավոր են հաշվետու լինել ժողովրդին, ներկայացնել «ապրիլյան պատերազմի» բացահայտած պրոբլեմները, դրանց լուծման և հակառակորդի հերթական հավանական հարձակմանը պատրաստվելու համար ձեռնարկվող քայլերը, ինչպես նաև մատնացույց անել ու պատժել մեղավորներին:

Ժողովրդին հասկապես հուզում են այն հարցերը, թե որոնք են առաջացած մարդկային, տարածքային, քաղաքական և նյութական ծանր հետևանքների պատճառները և ովքեր են դրանց համար պատասխանատու պաշտոնատար անձինք: Ներկայացնում ենք դրանցից առավել կարևոր 10 հարցերը.

1. Արցախի Նախագահի և ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոններն զբաղեցնող անձանց մակարդակով հաստատվեց, որ հայկական կողմը տեղյակ է եղել հարձակման մասին: Որո՞նք էին այն անհրաժեշտ ու բավարար միջոցները, որ պետք է ձեռնարկվեին դրան դիմակայելու և շփման գծին մոտ գտնվող գործառնական զինամայրոնների ու այդ տարածքում գտնվող բնակչության անվտանգության ապահովման համար:





10 հարց Սերժ Սարգսյանին....

2. Մշտապես հայտարարվել է, որ հակառակորդի հարձակման պարագայում հայկական կողմն ի վիճակի է նրան խաղաղություն պարտադրել: Ինչ հանգամանքներ թույլ չտվեցին անցնել հակահարձակման, ռազմական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք և վերացնել հետագայում ագրեսիայի կրկնության հնարավորությունը:

3. Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ հրադադարի հաստատումը հնարավոր է միայն ապրիլմեկյան դիրքերի վերականգնման պայմանով: Ինչո՞ւ հրադադարը կնքվեց այդ պայմանի զիջմամբ, և դիրքերը մնացին հակառակորդի ձեռքում:

4. Հաստատվել է, որ մեր կողմից կենդանի ուժի, սպառազինության և տեխնիկայի կորուստների մի զգալի մասը պայմանավորված է հակառակորդի կողմից բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արդիական սպառազինության և դրան համապատասխանող նոր մարտավարության, մասնավորապես՝ ԱԹՍ-ների կիրառմամբ: Ինչո՞ւ արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկվել դրանց ազդեցությունը չեզոքացնելու համար:

5. Ինչո՞ւ են մերժվել կամ անտեսվել պաշտպանական համակարգը արդիականացնելու վերաբերյալ Հայաստանում առկա բարձր տեխնոլոգիաների ոլորտի միջազգային մակարդակի ընկերությունների առաջարկությունները:

6. Ինչո՞վ է բացատրվում այն հանգամանքը, որ հայկական բանակի սպառազինությունն ու տեխնիկան խաղաղության 22 տարիների ընթացքում հիմնականում մնացել են 1980-ականների մակարդակին, մինչդեռ հակառակորդն այդ ընթացքում ձեռք է բերել մեծ քանակությամբ արդիական սպառազինություն և տեխնիկա:

7. Ինչ սկզբունքով է որոշվել ռազմական վտանգի պայմաններում բանակի նկատմամբ առաջնահերթություն տալ ոստիկանության և պետական կառավարման այլ մարմինների գերուժնացված և երկրորդական կարիքներին:

8. Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Արցախի անվտանգության երաշխավոր, հաշվի չառնելով Ադրբեյջանի՝ վերջին տարիների ռազմատեսչ հայտարարությունները և ագրեսիվ գործողությունները, անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել նրա բավարար պաշտպանունակությունն ապահովելու համար:

9. Ինչ իրավական, քաղաքական և տեղեկության գործողություններ են ձեռնարկել ՀՀ ԱԳՆ-ն և այլ պատասխանատու մարմինները միջազգային համայնքի առջև հակառակորդի հարձակումը որպես ագրեսիա ներկայացնելու ուղղությամբ:

10. Հաշվի առնելով, որ Սերժ Սարգսյանը ԵՏՄ-ին անդամակցելը հիմնավորում էր երկրի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, ինչո՞ւ որպես ԵՏՄ անդամակցության նախապայման չառաջադրեց Հայաստանին պատերազմով սպառնացող Ադրբեյջանին այդ միության անդամ-պետությունների կողմից սպառազինություն և ռազմական տեխնիկա չտրամատելու հարցը:

«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի քաղաքական խորհուրդն առաջիկա օրերին հրապարակային պատասխան է ակնկալում ժողովրդին հուզող վերը նշված հարցերի վերաբերյալ: Այդպիսի պատասխաններ չստանալու պարագայում Քաղաքական խորհուրդը կներկայացնի կատարվածի պատճառների և պատասխանատուների վերաբերյալ իր ուսումնասիրությունների արդյունքները:

«Նոր Հայաստան»

հանրային փրկության ճակատի քաղաքական խորհուրդ

Հայաստանի Հանրապետություն

Ղարաբաղում ապրիլյան իրադարձությունների շուրջ Թուրքիայի հայտարարությունն անթույլատրելի է. Լավրով

13:24, 22.04.2016




ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը Ղարաբաղում ապրիլյան իրադարձությունների կապակցությամբ Թուրքիայի արած հայտարարությունն անթույլատրելի է համարել: Այս մասին նա ասել է ապրիլի 22-ին Երևանում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ մամուլի ասուլիսին՝ անդրադառնալով Անկարայի կողմից արված միակողմանի հայտարարություններին:

«Դա անթույլատրելի է, քանի որ նման հայտարարությունները ոչ թե խաղաղության, այլ պատերազմի կոչ են: Դա արմատապես հակասում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների եւ միջազգային հանրության դիրքորոշմանը: Բայց մենք արդեն վարժվել ենք Թուրքիայի ներկայիս դեկլավարության նման հայտարարություններին»,- ասել է Լավրովը:

Ես չեմ կարող որոշել Հայաստանի, Ադրբեյջանի կամ ղարաբաղցիների փոխարեն. Լավրովը՝ Սերժ Սարգսյանին

17:16, 22.04.2016



Ղարաբաղը Ադրբեյջանի հետ ոչ մի ընդհանուր բան չի կարող ունենալ: Այս մասին, այսօր՝ ապրիլի 22-ին, Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար

Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Նախագահի մամուլի գրասենյակից NEWS.am-ին հայտնում են, որ հանդիպմանը քննարկվել են հայ-ռուսական հարաբերությունների օրակարգին և ս.թ. ապրիլի 2-5-ը ԼՂ հակամարտության գոտում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակին վերաբերող հարցեր: Ողջունելով ՌԴ արտաքին գործերի նախարարին Երևանում՝ Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ հայ-ռուսական հարաբերությունների օրակարգը բավականին հարուստ է, և տարբեր, այդ թվում՝ բարձր մակարդակի հանդիպումների ժամանակ անդրադարձ է կատարվում ամենաարդիական հարցերին: «Այնպես է ստացվել, որ ՌԴ կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդևի այցը կայացել է և Ձեր այցն էլ կայանում է մեր տարածաշրջանում լարված իրավիճակում: Եվ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ այդ իրավիճակը պայմանավորված է Ադրբեջանի անպատասխանատու գործողություններով: Սկսելով լայնամասշտաբ ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի դեմ՝ Ադրբեջանը եւս մեկ անգամ ապացուցեց, որ Ղարաբաղը Ադրբեջանի հետ ոչ մի ընդհանուր բան չի կարող ունենալ: Կիրառելով ամբողջ զինանոցը՝ Ադրբեջանը, իհարկե, արժանի հակահարված ստացավ: Բայց Ադրբեջանի այդ գործողությունները, իմ կարծիքով, բանակցային գործընթացը մղեցին բավականին հեռու մի կողմ: Մենք մշտապես այդ գործընթացում կառուցողական ենք եղել, մշտապես վստահ ենք եղել, որ Մինսկի խմբի համանախագահները, վերջիվերջո, կներկայացնեն հարցի լուծման իրենց մոտեցումը, հասցեական կասեն այն կողմի անունը, որը հրաժարվում է այդ առաջարկություններից: Բայց, ցավոք, ադրբեջանցիները համարեցին, որ իրենք կարող են անպատիժ խախտել դեռևս 1994-1995թթ. ստորագրված համաձայնագիրը և այն պայմանավորվածությունները, որոնք մենք ձեռք ենք բերել այս երկարատև բանակցությունների ընթացքում: Մենք այս փուլը սկսել ենք 2007 թվականին: Ինչ տարվա ընթացքում մենք այդ գործընթացի ակտիվ վկան ու մասնակիցն ենք եղել, փորձել ենք գտնել փոխընդունելի որոշումներ, լինել կառուցողական: Մենք համոզված ենք եղել, որ իսկապես այդ հարցը կարող է լուծվել բացառապես փոխզիջումների հիման վրա, խաղաղ ճանապարհով, բայց այսօր մենք ունենք այն, ինչ ունենք: Դրա համար էլ ինձ համար չափազանց կարևոր է Ձեր տեսակետը՝ ինչո՞ւ, այնուամենայնիվ, դա պատահեց: Իհարկե, մենք մեր պատկերացումն ունենք, բայց Դուք շատ ավելի եք տեղեկացված, այդ իսկ պատճառով շնորհակալ կլինենք, եթե Դուք ներկայացնեք Ձեր պատկերացումը», -ասել է Նախագահ Սերժ Սարգսյանը: ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը շնորհակալություն է հայտնել ՀՀ Նախագահին հանդիպման հնարավորության համար, ներկայացրել մինչև Հանրապետության Նախագահի հետ հանդիպումն իր այցի շրջանակներում ունեցած բանակցությունների արդյունքները: «Մենք արդեն լավ բանակցություններ ենք անցկացրել, դիտարկել ենք երկկողմ պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, որոնք Դուք Վլադիմիր Վլադիմիրի Պուտինի հետ ձեռք եք բերել: Որոշ տեղերում մեզ մոտ ձգձգումներ կան, սակայն, այնուամենայնիվ, հավատարմությունը բոլոր սկզբունքային պայմանավորվածություններին պահպանվում է: Դա մեր գլխավոր նպատակն է՝ աշխատել նախագահների հանձնարարությունների ուղղությամբ: Մենք քննարկել ենք

նաև դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման իրավիճակը և խորապես անհանգստացած ենք կատարվածով: Ինչպես գիտեք, առաջին իսկ լուսններից ռուսական կողմը՝ անձամբ Նախագահը, ձգտել ենք կասեցնել այն համաձայնագրերի խախտումները, որոնք ստորագրվել են 94-95թթ. և ունեն ամժամկետ բնույթ: Մենք դա այսօր հստակ հաստատեցինք և կոչ արեցինք ոչ մի ձեռով կասկածի տակ չդնել այդ կարևորագույն փաստաթղթերը: Եվ հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը: Այնուամենայնիվ, ինչպես հասկանում ենք, իրավիճակը դեռևս մինչև վերջ չի կայունացել, և մենք ելնում ենք նրանից, որ տվյալ փուլում շատ կարևոր է կյանքի կոչել այն, ինչի մասին Դուք պայմանավորվել եք Ադրբեջանի նախագահի հետ դեռևս 5 տարի առաջ Ռուսաստանի միջնորդությամբ՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմների, միջադեպերի կանխման և վստահության միջոցների մասին, որպեսզի առավելագույնս նվազեցվի, նույնիսկ պարզապես տեխնիկական քայլերի միջոցով, առճակատման բռնկման հնարավոր որել վտանգ:

Համապատասխան հանձնարարություններ տրվել էին ԵԱՀԿ-ին, և մենք այժմ ցանկանում ենք, որ գերմանական նախագահությունը դրանով ակտիվ մտահոգվի: Ես հասկանում եմ, ինչ էիք Դուք ասում, Սերժ Ազատի, իհարկե, այն մասին, որ հիմա դժվար է վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ: Իրավիճակը պետք է փոքր-ինչ հանդարտվի, և մարդիկ պետք է մի փոքր հանգստանան: Մենք մեկ անգամ եւս մեր ցավակցությունն ենք հայտնում այս հակամարտության պատճառով զոհերի կապակցությամբ, բայց, այնուամենայնիվ, ես Ձեզ հետ համաձայն եմ, որ հակամարտությանը ռազմական լուծում չկա, ինչը նշանակում է՝ պետք է շարունակել ջանքեր ներդնել քաղաքական կարգավորման ուղղությամբ: Ինչո՞ւ իրավիճակը հայտնվեց նման ճգնաժամային կետում, ես չեմ կարող որոշել Հայաստանի, Ադրբեջանի կամ դարաբաղցիների փոխարեն, բայց ես կարծում եմ, որ եթե մեզ հաջողվեր քաղաքական գործընթացում առաջ շարժվել, թեկուզ մի փոքր, եթե մենք թեկուզ նախանշեինք ընդհանուր սկզբունքներ, որոնք կողմերը գոնե հիմք կընդունեին արդեն իրավականորեն պարտավորեցնող փաստաթղթերի մշակման, նախապատրաստման համար, իհարկե, դա ոչ միայն կարևոր դեր կխաղար բանակցությունների վերսկսման համար, այլ նաև զսպող գործոն կհանդիսանար բռնության բռնկումներ թույլ չտալու համար: Բայց, կրկնում եմ, լուծման կարող են հասնել միայն իրենք՝ կողմերը: Մենք փորձել ենք, փորձում ենք և կփորձենք օգնել համանախագահների՝ ամերիկացիների, ֆրանսիացիների հետ միասին: Մենք ունենք միասնական դիրքորոշում, և ինչպես հասկանում եմ, Հայաստանը սատարում է այդ դիրքորոշմանը, որ համանախագահների եռյակը՝ ԵԱՀԿ-ի հետ միասին պետք է շարունակի իրականացնել հիմնական համակարգողի գործառնությունը՝ համապատասխան այն մանդատի, որը կողմերը համաձայնել են տրամադրել այդ մեխանիզմին: Եվ մենք չենք ողջունում զուգահեռ ինչ-որ ուղիներ փնտրելու, մեխանիզմներ ստեղծելու փորձերը, որոնք չեն վայելում բոլոր կողմերի վստահությունը: Դա միայն կշեղի հիմնական խնդրից՝ ապահովել անվտանգություն, թույլ չտալ նոր զոհեր և, այնուամենայնիվ, ստեղծել քաղաքական գործընթացի վերսկսման համար պայմաններ», -ասել է ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

Լավրովը լուսանկարել է Արարատը

23:47, 22.04.2016



Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդևից հետո, որը Հայաստան այցից հետո Արարատի ֆոնին Երևանի լուսանկար էր տեղադրել Instagram-ում, հիմա էլ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովն է լուսանկարել Արարատ լեռը: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան Facebook սոցիալական ցանցի իր էջում տեղադրել է Լավրովի՝ բջջայինով արած Արարատ լեռան լուսանկարը:

«Արարատն այսօր հիացնում էր իր գեղեցկությամբ: Սերգեյ Լավրովը չդիմացավ եւ լուսանկարեց», - գրել է նա:

Արկադի Տեր-Թադևոսյանն անթույլատրելի է համարում անգամ մեկ սանտիմետր հակառակորդին տալը



Արցախի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ որևէ սանտիմետր չի կարելի փոխանակել հակառակորդի հետ, քանի որ դա թշնամուն հնարավորություն կտա մոտենալ մեզ: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը իր խոսքում նշեց.

«Զի կարելի որևէ սանտիմետր տալ հակառակորդին: Շատ անգամ են մեզ առաջարկվել Մադրիդյան սկզբունքները, որոնք ԼՂՀ-ի համար անընդունելի են: Ռուս քաղաքագետները հաճախ հնչեցնում են այն տեսակետը, որ այս իրավիճակում ամենաբարդ դիրքում է հայտնվել Ռուսաստանը: Նրանք նշում են, որ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է, իսկ մյուս կողմից, Ադրբեջանը Ռուսաստանի ստրատեգիական գործընկերն է: Հաճախ քաղաքագետների արած հայտարարությունները դեմ են Հայաստանի դիրքորոշմանը:

Եթե մենք փոխանակենք որևէ տարածք, ապա կստացվի, որ թշնամուն տալիս ենք մեզ մոտենալու հնարավորություն: Դա պանթյուրքիզի երազանքն է, որը մենք բոլորս գիտենք: Ռուսաստանը դա շատ լավ է հասկանում:»

Խոսելով հակամարտող կողմերի հնարավորությունների մասին՝ գեներալը նշեց.

«Լայնամասշտաբ գործողությունները ձեռնառու չեն Ադրբեջանին, քանի որ դրանք կհանդիսանան Ադրբեջանի վերջը: Բացատրեմ ինչու: Ադրբեջանը նստած է նավթի տակառի վրա: Եթե թշնամու ուղղությամբ ուղարկենք ընդամենը մի քանի հրթիռ, կարող ենք ոչնչացնել Ադրբեջանի 30-40 տոկոսը, և մենք ունենք այդ հնարավորությունը: Ադրբեջանն ունի նավթային հարթակներ, որոնցից մեկը եթե վառվեց, հանգցնելու համար 4-5 ամիս պետք կլինի»:

Պայմանավորված էր, որ «Սմերչ» զինատեսակը չպետք է կիրառվեր Ղարաբաղի դեմ. Արկադի Տեր-Թադևոսյան

08 Ապրիլի 2016, 14:57



Արցախի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ «Սմերչ» զինատեսակը, ըստ կողմերի պայմանավորվածության, չպետք է օգտագործվեր Ղարաբաղի դեմ:

Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը իր խոսքում նշեց.

«Գիտեք, ես շատ եմ «հավանում» Թուրքիան և Ադրբեջանը: Թուրքիայի սուլտը ժամանակին պարզ դարձավ, հիմա էլ միջազգային հանրությունը սկսում է հետզհետե բացահայտել Ադրբեջանի սուլտը: «Սմերչը» և այլ զինատեսակներ, որոնք Ռուսաստանից գնել էր Ադրբեջանը, ըստ պայմանավորվածության, Ադրբեջանը խոստացել էր չկիրառել Ղարաբաղի դեմ: Հիմա թող ՌԴ ՊՆ նախարար Շոյգուն և Ռուսաստանի վարչապետ Մեդվեդևը պարզաբանումներ անեն, թե ինչու այնպես ստացվեց, որ Ադրբեջանը օգտագործեց «Սմերչ»-ը: Ադրբեջանը հերթական անգամ արեց իր ստոր քայլը», - ասաց Արկադի Տեր-Թադևոսյանը:

Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը իր խոսքում անդրադարձավ նաև Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուբյույ-օղլու հայտարարությանն այն մասին, որ Ադրբեջանը ուժային մեթոդներով է ցանկանում լուծել Արցախի հակամարտության խնդիրը:

«Կարծում եմ, Ադրբեջանին ձեռնառու չէ այս պատերազմը, նրանց ստիպեցին իրենց հարևան և բարեկամ երկրները: Լատ իս, ստիպեցին կռվել ոչ թե Ղարաբաղի, այլ Ռուսաստանի դեմ: Ուկրաինայի, Աֆղանստանի դեպքերն ուղիվ են Ռուսաստանի դեմ, մենք նմանատիպ խաղի մեջ ենք ներքաշված: Ի՞նչ են ուզում այդ «խաղացողները» դժվար է հասկանալ, բայց այն, որ հիմա մեծ ու բազմակողմանի խաղ է գնում, դա փաստ է: Սա իմ կարծիքն է, որի հետ համամիտ են շատերը», - նշեց գեներալը:

Քացահայտվել է Արցախի դեմ գրոհի պլանը

ՀԱՆՐԱ ԲԱԳՎԱՅԱՆ, Մեկնաբան

08 Ապրիլի 2016, 10:43



ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևի հայաստանյան այցի ընթացքում փաստորեն բացահայտվեցին Արցախի դեմ ապրիլի 2-ին Ադրբեջանի սանձազերծած գրոհի պլանը, դրա մշակման հստակ ընթացակարգն ու առաջնային շահառուները:

Դա արեց Հովիկ Աբրահամյանը, կամա թե ակամա, Դմիտրի Մեդվեդևին խնդրելով, որ արագացնեն Հայաստանին 200 միլիոն դոլարի սպառազինության տրամադրումը: Պարզվում է, որ Ռուսաստանը վարկը «ոլորս է գրել» արդեն, սակայն դրա դիմաց սպառազինության պայմանագրերը կնքված չեն, սպառազինություն չկա:

Իսկ մի քանի ամիս առաջ ռուսաստանյան լրատվամիջոցները հրապարակում են Հայաստանին իբր թե մատակարարվելիք սպառազինության ցանկը: Դրանից հետո Ադրբեջանը հանդես է գալիս բողոքի նոտայով, ՌԴ ԱԳՆ-ից պահանջելով երաշխիք, որ այդ սպառազինությունը չի կիրառվի Ադրբեջանի դեմ:

Ռուսաստանը լռում է մի քանի օր, մինչև Պուտինը հեռախոսագրույց է ունենում Ալիևի հետ: Հետո մի քանի ժամ անց ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Չախարովան հայտարարում է, թե «հույս ունեն», որ Ադրբեջանն ըմբռնումով կնոտենա Հայաստանին գեներ մատակարարելուն, քանի որ ՌԴ-ն ունի դաշնակցային պարտավորություններ: Չախարովան միաժամանակ ասում է, թե սպառազինություն մատակարարելիս հաշվի են առնում հավասարակշռության խնդիրը:

Դա բացահայտ եւ ուղիղ երաշխիք էր Ադրբեջանին, որ Բաքուն չունի մտահոգվելու առիթ: Այսինքն, Ադրբեջանին միլիարդավոր դոլարների մահաբեր սպառազինություն մատակարարած Ռուսաստանը այդ կապակցությամբ ոչ մի հանգամանակից բացատրություն չի տվել Հայաստանին, սակայն հանգամանակից բացատրում է իրավիճակն Ադրբեջանին: Իսկ ի՞նչ էր բացատրում ՌԴ-ն: ՌԴ-ն բացատրում էր, որ Ադրբեջանը չունի անհանգստանալու կարիք, քանի որ Հայաստանի հետ սպառազինության պայմանավորվածությունը այնպիսին չէ, որ անհանգստություն պատճառի Ադրբեջանին: Այլապես, ի՞նչ հավասարակշռության մասին կարող է լինել խոսքը, եթե Ադրբեջանին մատակարարվում է ընդհանուր առմամբ մոտ 6-7 միլիարդ դոլարի արդիական սպառազինություն, իսկ Հայաստանին դրա ընդամենը մոտ 5 տոկոսի չափով, այն էլ ոչ այնքան արդիական, եւ այն էլ ինչպես պարզվում է՝ չի էլ մատակարարվում:

Եվ անկասկած է, որ ռուսական կողմը Բաքվին փոխանցել է տեղեկությունը, որ Հայաստանի սպառազինությունը մատակարարված չէ, եւ չեն էլ պատրաստվում դա անել առաջիկայում: Այդ տեղեկությունը Բաքվին փոխանցվել է ՌԴ փոխվարչապետ Ռոզոզինի այցի ընթացքում, որին Պուտինը գիշերով գործուղել էր Բաքու՝ Ադրբեջանին սպառազինության նոր խմբաքանակի հետ կապված Բաքվի դիտորությունները լսելու համար:

Իսկ Բաքուն դժգոհել էր տեխնիկական կոմպլեկտացիայից՝ իբրեւ թե, իսկ իրականում Ռուսաստանի հետ անկասկած քննարկվել են ադրբեջանական եւ հայկական զինուժների ռազմա-տեխնիկական հարաբերակցության հարցերն, ու Ադրբեջանը Ռուսաստանից ստացել է արդեն առավել անմիջական երաշխիքներ, որ Երեւանին մատակարարված չէ արդիական սպառազինությունը, հետեւաբար հնարավոր է պատրաստվել գրոհի:

Այլապես, մեղմ ասած տարօրինակ է, երբ Ռուսաստանը Հայաստանին սպառազինությունն ուշացնում է, չի մատակարարում, իսկ նրա հակառակորդ, նրան պատերազմով սպառնացող Ադրբեջանին ոչ միայն մատակարարում է, ոչ միայն գիշերով թռչում են Բաքու լսելու, թե ինչ դժգոհություն ունի Ալիևը, այլ նույնիսկ ՌԴ նախագահի մակարդակով են արձագանքում դրան, Բաքվին տալով բարձրագույն երաշխիքներ:

Ադախտով, ակնհայտ է, որ Արցախի դեմ գրոհից առաջ, մի քանի օրերի ընթացքում Ռուսաստանը Ադրբեջանին տվել է ռազմա-տեխնիկական գործնականում բոլոր երաշխիքները, որ հայկական բանակն ունակ չէ կազմակերպել ռազմա-տեխնիկական համարժեք դիմադրություն, որ հայկական կողմը չի ստացել Ադրբեջանի ստացածի գոնե 5 տոկոսի սպառազինությունը, հետեւաբար Մոսկվան ապահովել է Բաքվի գրոհի՝ բից-կրիգի «կարմիր գորգը»:

Ռուսաստանի հետագա գործողությունը վկայում է, որ դա եղել է համատեղ պլանավորված հստակ ռազմարշավ, որի նպատակն է եղել տարածք խաղաղապահի դիմաց ռուսական գաղափարի վերակենդանացումը, որը երկրորդ պլանն էր գործնականում փակուղի էր մղվել շփման գծում հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմի ամերիկյան առաջարկի պատճառով:

Ռուս-ադրբեջանական հաշվարկը պարզապես հաշվի չէր առել մի հանգամանք՝ Հայաստանի մարդկային ռեսուրսը: Ըստ երեւույթին, տարիներ շարունակ Ռուսաստանի հակահայկական քաղաքականությունն արդարացնող ռուսական կայսրության քարոզչական սպասարկող անձնակազմը՝ տարատեսակ քաղաքական գործիչներ, նրանց կից փորձագետներ, տարբեր մասնագետներ, հավատացրել են մետրոպոլիային, որ հասարակական դիմադրունակության ռեսուրսը ոչնչացված է վաղուց:

Ի դեպ, հավանաբար առաջիկայում Ռուսաստանը կսկսի լրջորեն զբաղվել իր այդ ապոլոգետներով, որոնք փաստորեն վրիպել են, կամա թե ակամա ձախողելով ռուս-ադրբեջանական գործարքը: Գոնե դրա «ակնթարթային» բնույթը, քանի որ ներկայում ակնհայտ է Մոսկվայի եւ Բաքվի ջանքը՝ տարածք խաղաղապահների դիմաց գործարքը առաջ մղելու հարցում:

Ընդ որում, աստիճանաբար բավական շոշափելիորեն նկատվում է նաեւ «ապոլոգետներին» ջանքի ակտիվացումը, ըստ երեւույթին ինքնապաշտպանության նպատակով Հայաստանում Ռուսաստանի ոչնչացված դիրքերը վերականգնելու, եւ այդպիսով «մետրոպոլիայի» առաջ արդարանալու, այսպես ասած ինդուլգենցիա ստանալու համար:

Բանն այն է, որ ռուս-ադրբեջանական պլանի համաձայն, բլից-կրիզը պետք է ոչնչացնե՛ր հայկական դիրքերն Արցախում, բայց փաստացի ստացվեց, որ Ադրբեջանին ժամացույցի ճշտությամբ մատակարարված ռուսական սպառազինությունը սպանել է մի քանի տասնյակ հայ զինվոր ու հրամանատար, բայց ոչնչացրել է Հայաստանում ռուսական դիրքերը:

Կոչ հայրենակիցներին. Արթուր Աղաբեկյան

08 Ապրիլի 2016, 22:01



ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը «Ֆեյսբուքի» իր գրառումով դիմել է Արցախում, Հայաստանում և արտերկրում ապրող հայրենակիցներին՝ նշելով, որ Արցախի կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարներն միջոցները օր-օրի համարվում են, և միջոցներն ուղղվելու են նաև Չինված ուժերի համար արդի սպառազինությունների ձեռքբերմանը:

«Արցախում, Հայաստանում և արտերկրում ապրող իմ հայրենակիցներ, ոչ ռուսը, և ոչ էլ որևէ մեկը՝ բացի հայից, մեր սահմանին չի գոհվելու, մեր հայրենիքի պաշտպանության գործում դեր չի ունենալու: Արցախի կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարը օր-օրի համարվում է, և այն ուղղվելու է բացառապես Չինված ուժերի համար սպառազինությունների ձեռքբերմանը: Մենք այլընտրանք չունենք, ինքներս պիտի հոգանք մեր պաշտպանությունը: Նվիրաբերելով պաշտպանության բնագավառին ուղղված ֆինանսական և նյութական ռեսուրսներ՝ կկարողանանք խնայել մեր զինվորների կյանքը:», - նշել է Արթուր Աղաբեկյանը:

ԼՂՀ կառավարության հաշվեհամարներին մինչ 07.04.2016թ. հավաքված նվիրատվություններին կարելի է ծանոթանալ [այստեղ](#): Հավաքված գումարը կազմում է 891 մլն 583 հազար 119 դրամ, 63 հազար 707 ԱՄՆ դոլար, 1938 եվրո և 11 մլն 238.6 հազար ՌԴ ռուբլի:

Նշենք, որ ստեղծված այս ծանր իրավիճակում հազարավոր հայրենակիցներ դիմում են Արցախի Հանրապետության կառավարությանը՝ հայտնելով իրենց աջակցությունն ու օգնություն ցուցաբերելու պատրաստակամությունը: Այդ կապակցությամբ ԼՂՀ կառավարության կողմից բացվել են հետևյալ բանկային հաշիվները՝

Սպասարկող բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ Հասցե՝ Կիևյան փողոց 3, Երևան, Հայաստան [SWIFT:ARTSAM22](#) Ստացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Հաշվի համարը՝ 22300612211100 (ՀՀ դրամ).
Հաշվի համարը՝ 22300110153200 (ԱՄՆ դոլար).
Հաշվի համարը՝ 22300200153300 (Եվրո).
Հաշվի համարը՝ 22300400153100 (ՌԴ ռուբլի):

Բակո Սահակյան. Պաշտպանության բանակն արդյունավետորեն է իրականացրել իր առաքելությունը



00:22, 06.04.2016

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ապրիլի 5-ին անց է կացրել աշխատանքային խորհրդակցություն՝ նվիրված դարաբաղա-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակին:

Նախագահ Սահակյանը կարեւորել է մարտական գործողությունների դադարեցումը եւ հրադադարի ռեժիմի վերականգնումը՝ միաժամանակ նշելով, որ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակն արդյունավետորեն է իրականացրել մեր երկրի եւ ժողովրդի անվտանգության ապահովման իր առաքելությունը ու այսուհետ եւս պատրաստ է կատեցնել հակառակորդի ցանկացած ագրեսիվ ոտնձգություն:

Խորհրդակցությանը մասնակցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

Այստեղ դիակներին փայտերի պես լցնում են մեքենաները. Հայ հետախույզները որսացել են ադրբեջանցիների հեռախոսագրույցը

00:21, 06.04.2016

ԼՂՀ ՊԲ-ն հրապարակել է Ադրբեջանի սահմանամերձ գյուղերից մեկի բնակչուհու որսած հեռախոսագրույցը, որտեղ վերջինս խոսում է ադրբեջանական կողմի կորուստների մասին:

Մասնավորապես, կինը նշում է 2000-ից ավելի մարդկային կորստի մասին, հավելելով, որ պետք չի հավատարմ հեռուստատեսությամբ հաղորդվող տեղեկատվությանը:

«Հեռուստացույցին մի հավատացեք: Այստեղ դիակներին փայտերի պես լցնում են մեքենաները, երեք գոներից մեկի մասին անգամ չեն ասում, հազար գոհից միայն մեկի մասին են ասում: Շրջանային բոլոր հիվանդանոցները լիքն են Եվլախ, Գյանջա, Նավթալան, Գերանբոյ, Թարթառ, Բարդա, գյուղական հիվանդանոցներն էլ են լիքը: Երդվում են, մի հավատացեք հեռուստացույցին, 2 հազար զինվորի մեկ գիշերում խփեցին, բայց այդ մասին չեն ասում: Թալիշը վերցրին, թակարդում բոլորին խփեցին: Ծանր վիրավորներին ուղղաթիռով տարան: Չինվորը սովից մեռնում է, ոչ ոք ուշադրություն չի դարձնում, հեռուստացույցով անգամ մեկ գումարտակի կորստի մասին չեն ասում», - նշել է նա:

Միջազգային հանրությունը հավասարության նշան է դնում Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ. Փոստանշան

18:11, 05.04.2016

Միջազգային հանրությունը հավասարության նշան է դնում Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ: Այս մասին ապրիլի 5-ին խորհրդարանում ասել է «Շառանգություն» խմբակցության պատգամավոր Չարուհի Փոստանշանը: «Իսկ Հայաստանի իշխանությունները մի քանի անգամ մերժել է Լեռնային Ղարաբաղը ճանաչելու մասին «Շառանգության» օրինագիծը՝ ասելով, թե այդ օրինագիծը կարող է վնասել բանակցային գործընթացին: Ժամանակը ցույց տվեց այդ քաղաքականության անհետատեսությունը: Նման պահվածքն անթույլատրելի է»,- ընդգծել է նա:

Ադրբեջանը Հայաստանի համար. Քորթին Քարդաշյան

5 ԱՊՐԻԼԻ, 00:29

Քրե Քարդաշյանին միացել է նաև քույրը՝ Քորթին Քարդաշյանը: Նա իր Facebook-ի էջում եւս գրառում է կատարել Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների վերաբերյալ. Քորթինն գրել է. «Ադրբեջանը Հայաստանի համար»:

Սերժ Թանկյանն ու Քրե Քարդաշյանն ավելի վաղ արդեն արտահայտել են իրենց կարծիքը վերջին օրերի իրադարձությունների վերաբերյալ: SOAD խմբի հայտնի կատարողը խորհուրդ էր տվել Թուրքիայի նախագահին ուշադիր ուսումնասիրել պատմությունը:

Հպարտ ենք, որ նման հերոս համագյուղացի ունենք.

Ադրբեջանը ռազմական հանցագործություններ է կատարել. Արդարադատության նախարար

00:43, 05.04.2016

Ադրբեջանը ռազմական հանցագործություններ է կատարել: Այս մասին ապրիլի 4-ին, լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

«Քաղաքացիական անձանց վայրագ սպանություններ են տեղի ունեցել: Հայաստանի Հանրապետությունը պետք է որպես պահանջատեր հանդես գա՝ հաշվի առնելով միջազգային մարդասիրական իրավունքների եւ նորմերի խախտումը»,-ասաց ՀՀ արդարադատության նախարարը:

Համացանցում հասանելի է ադրբեջանցի 25000 զինվորականների տվյալները

01:37, 05.04.2016

Monte Melkonyan Cyber Army խմբի անդամները կտորել են ադրբեջանական ցանցը եւ համացանցում տեղադրել են Ադրբեջանի 25 հազար զինվորականների տվյալները:

[Твиты от @mmca_official](#)

Հիշեցնենք, որ Ադրբեջանը ապրիլի 1 լույս 2 գիշերը դարաբաղաադրբեջանական ողջ շփման գծի երկայնքով խախտել է հրադադարը, ու անցել հարձակողական գործողությունների:

Ղարաբաղի պաշտպանության բանակի տվյալով, հակառակորդը արդեն ունի մոտ 300 կենդանի ուժի կորուստ, ադրբեջանական խիված տանկերի ընդհանուր թիվը դարձել է 29, իսկ անօդաչուների թիվը՝ 10, 2

ուղղաթիռ, 1 ինժեներական տեխնիկա, 3 հետևակի մարտական մեքենա, 1 ՄՄ-21 («Գրադ») կայան:

Քիմն Instagram-ում Հայոց բանակի հաղթական տանկերի ու ուղղաթիռների նկար է հրապարակել

5 ԱՊՐԻԼԻ, 03:07

Ադրբեջանի կողմից Ղարաբաղի նկատմամբ իրականացրած ագրեսիան գնալով լայն արձագանք է գտնում Սփյուռքի աստղերի շրջանում:

Քիմ Քարդաշյանը [Instagram](#)-ի իր էջում հայոց բանակի հաղթական նկար է տեղադրել, տանկով ու ուղղաթիռներով, նշելով «Ադրբեջանը Հայաստանում գտնվողների եւ աշխարհի բոլոր մարդկանց համար»:

Հատկանշական է, որ կարճ ժամանակում նկարի տակ հայտնվել են ադրբեջանցի կիբերոհմանակի ներկայացուցիչների բյուրավոր մեկնաբանությունները, որոնք սակայն փոքրամասնություն են կազմում, քանի որ Քիմի Instagram-ի հետևորդների թիվը բոլոր ադրբեջանցիներին մի քանի անգամ գերազանցում է, ավելի ստույգ այն 66 մլն է: Այնպես որ ադրբեջանական քարոզամեթոդների գեներացրած օգտատերերը <անհարմար> իրավիճակում են հայտնվել:

Հիշեցնենք, որ ավելի վաղ այս թեմային անդրադարձել էր Քիմի քույրերը՝ Քորթինն ու Քրեին:

Ադրբեջանը թիկունքից 2 անգամ գնդակահարել է սեփական զորքերին. ՊՆ խոսնակ

13:12, 05.04.2016

Ադրբեջանական կողմը երկու անգամ թիկունքի գնդակահարել է սեփական զորքերին, որոնք հայկական ճնշման տակ թողնում էին դիրքերը: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:

«Մատաղիսի հատվածում իրենք իրենց դիրքերի մերձակայքերից ու միջանկյալներից ադրբեջանցիները հանում են իրենց արգելափակից զորքերով ոչնչացված զինվորների դիակները: Երկու անգամ թիկունքից գնդակահարել են սեփական զորքերին, որոնք հայկական ստորաբաժանումների ճնշման տակ թողնում էին դիրքերը»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ ապրիլի 2-ի գիշերը իրավիճակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կտրուկ լարվել է: Խրոնիկ բնույթ կրող կրակոցներից եւ մասնակի դիվերսիոն հետախուզական փորձերից Ադրբեջանն անցում է կատարել մասշտաբային հարձակման շփման գծի ողջ երկայնքով՝ օգտագործելով հրետանի, ծանր տեխնիկա եւ ավիացիա: Սա ամենախուշոր գործողություններն են 1994 թվականին հաստատված հրադադարի ռեժիմից հետո, որոնք ձեռնարկել է Ադրբեջանի զինուժը: Երկու կողմերից էլ կան զոհեր:

Ծվեղիայում հայերը բողոքի ցույցի են ելել՝ ընդդեմ Ադրբեջանի իրականացված ագրեսիայի

Ծվեղիայում հայերը բողոքի ցույց են արել ընդդեմ Ադրբեջանի կողմից իրականացված ագրեսիայի:

Այսօր Ծվեղիայի հայ համայնքի անդամները հավաքվել էին Ծվեղիայի արտաքին գործերի նախարարության դիմաց իրենց բողոքը ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի դեմ

Ադրբեջանի կողմից սանձագերծված պատերազմական գործողությունների կապակցությամբ: Յույցի մասնակիցները կոչ են արել Ծվեդիայի իշխանություններին պարտադրել Ադրբեջանին դադարեցնել ԼՂՀ-ի դեմ իրականացվող ագրեսիան: Պատասխանները պատկերում էին նաև ապրիլի 2-ին Թայիշ գյուղում ադրբեջանական հրոսակների կողմից վայրագորեն սպանված Խալափյանների լուսանկարները, նշելով, որ նախահարձակ ադրբեջանական զինվորները չեն խորշում իրականացնել նմանատիպ ռազմական հանցագործություններ:

ԼՂՀ իշխանություններն ապացույցներ ունեն ռազմական գործողություններին վարձկանների ու ահաբեկիչների մասնակցության մասին

13:25, 05.04.2016

Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ապացույցներ ունեն ռազմական գործողություններին վարձկանների ու ահաբեկիչների մասնակցության մասին: Այս մասին հայտնել է Լեռնային Ղարաբաղի հանրապետության նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը՝ թղթակցի հետ զրույցում:

«Հիմքեր կան հայտարարելու, որ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձագերծած ագրեսիվ գործողություններին մասնակցել են նաև ԻՊ ու այլ ահաբեկչական կազմակերպություններից վարձկաններ: Այս մասին են վկայում բազմաթիվ հանգամանքներ՝ նրանք իրար հետ թուրքերեն ու արաբերեն էին խոսում, այլ համազգեստով էին, զինյալների նման էին գործում: Նրանց տարիքն էլ էր ուրիշ՝ բոլորը 30-ն անց էին», - նշել է Բաբայանը:

Այս կապակցությամբ նա հիշեցրել է, որ Ադրբեջանի հակաայական քանակության քաղաքացիների անդամագրվել են ահաբեկչական կազմակերպությունների, մասնավորապես ԻՊ-ին: Ընդ որում նրանց մեծ մասը զինձառայողներ են: «Այնտեղ կապեր հարթելով, այդ այսպես կոչված զինձառայող -գրոհայինները կազմակերպել են ահաբեկիչների հոսք Թուրքիայից Նախիջևան, այնտեղից էլ Ադրբեջան՝ հակամարտության գոտի», - նշել է ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղարը:

Լայնամասշտաբ պատերազմի դեպքում հարվածներ կհասցվեն Ադրբեջանի էներգետիկ օբյեկտներին. քաղաքագետ

13:52, 05.04.2016

Հավանականությունը մեծ է, որ կարճ ժամանակում Ադրբեջանը կսկսի ավելի լայնամասշտաբ ռազմական գործողությունների դիմել: Այս մասին այսօր՝ ապրիլի 5-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց քաղաքագետ Սերգեյ Մինասյանը:

«Այս պահին լայնամասշտաբ պատերազմ չի գնում, բայց ակնհայտ է, որ Ադրբեջանը շատ կարճ ժամանակում կարող է գնալ Էսկալացիայի՝ բավական լուրջ հարվածներ հասցնելով Ստեփանակերտին եւ այլ քաղաքներին», - նշեց քաղաքագետը՝ հավելելով, որ սա դեպքերի զարգացման սցենարներից մեկն է:

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ ուժերի շփման գծում տիրող իրավիճակի զարգացման մեկ այլ սցենար էլ, ըստ քաղաքագետի, այն է, որ հայկական կողմը կվերականգնի շփման գիծը, եւ ոչնչացնելով կարեւորագույն

ռազմական կետեր, կփորձի ադրբեջանական կողմին ստիպել պահպանել հրադադարի ռեժիմը:

«Երրորդ տարբերակը կլինի երկրորդի շարունակությունը, որի դեպքում մի քիչ ավելի երկար գործընթաց կունենանք: Ցածր եւ միջին ինտենսիվության ռազմական գործողություններն ավելի երկար կտևեն», - ասաց քաղաքագետը:

Ըստ Սերգեյ Մինասյանի՝ ադրբեջանական լայնամասշտաբ ռազմական գործողությունների դեպքում մեր կողմից ոչնչացնող հարվածներ կհասցվեն Ադրբեջանի կարեւորագույն տնտեսական եւ էներգետիկ օբյեկտներին:

«Չգիտեմ՝ որքանով Ադրբեջանն ի վիճակի կլինի դրան դիմակայել: Բայց չեմ կարծում, որ կկարողանա, եթե մի քանի օրվա ընթացքում չհաջողվեց բլից-կրիգ իրականացնել, դա անել արդեն այս պահին շատ դժվար կլինի», - նշեց քաղաքագետը:

Սերգեյ Մինասյանը կարծիք հայտնեց, որ Ադրբեջանի՝ նախահարձակ լինելու գլխավոր պատճառը Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում իր համար բացասական զարգացումներն է: «Ադրբեջանը ցանկացել է ցույց տալ, որ ի վիճակի է ռազմական գործողությունները վերսկսել, դրա հետ մեկտեղ ազդել հայկական կողմերի եւ միջազգային հանրության վրա՝ ավելի նպաստավոր բանակցային գործընթացի առումով», - ասաց քաղաքագետը:

Ադրբեջանը, քաղաքագետի խոսքով, շփման գծում լարվածության սրման է դիմել նաև երկրում տիրող տնտեսական, սոցիալական եւ քաղաքական վիճակից ելնելով:

Հիշեցնենք, որ ապրիլի 2-ի գիշերը իրավիճակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կտրուկ լարվել է: Խրոնիկ բնույթ կրող կրակոցներից եւ մասնակի դիվերսիոն հետախուզական փորձերից Ադրբեջանն անցում է կատարել մասշտաբային հարձակման շփման գծի ողջ երկայնքով՝ օգտագործելով հրետանի, ծանր տեխնիկա եւ ավիացիա: Սա ամենախոշոր գործողություններն են 1994 թվականին հաստատված հրադադարի ռեժիմից հետո, որոնք ձեռնարկել է Ադրբեջանի զինուժը: Երկու կողմերից էլ կան գոհեր:

Ադրբեջանն օգտագործում է ինքնակործանվող անօդաչու սարքեր

13:59, 05.04.2016

Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը ցույց է տվել Ադրբեջանի կողմից կիրառվող HAROP խրայելական արտադրության հարվածային անօդաչու սարքերը:

«Ահա Ադրբեջանի կողմից կիրառվող հարվածային դրոնները», - գրել է Արծրուն Հովհաննիսյանը Facebook-ի իր էջում:

Ավելի վաղ դարաբաղյան կողմը հայտարարել էր, որ ոչնչացրել է մի քանի թռչող անօդաչու սարք: HAROP դրոնն ինքն իրենով հիմնական զինամթերք է համարվում: Գործողության սկզբունքը հետեւյալն է՝ կախվում է օբյեկտի վրա եւ պտտվում, հետո՝ երբ օբյեկտը շարժվում է կամ սկսում մանևրել՝ կրակում է:

Հայոց բանակը մեծ սիրտ ունի եւ պայքարում է մեր պատմական տարածքի՝ Արցախի համար. Հովիվուդյան դերասան Մարկո Խան

5 ԱՊՐԻԼԻ, 14:01

Լեռնային Ղարաբաղում տիրող լարված իրավիճակի պատճառով մտահոգվում են ոչ միայն Հայաստանում

սպրող, այլև սփյուռքում բնակվող հայերը: Մեր հայտնի հայրենակիցներից շատերը՝ Քլոե, Քորթնի, Քիմ Քարդաշյանները, ֆրանսիացի երգչուհի Էլեն Սեզարան, ամերիկյան FOX 11 TV-ի հաղորդավարուհի Արաբայա Կարապետյանը, ամերիկյան Reddit կայքի համահիմնադիր Ալեքսիս Օհանյանն արդեն հասցրել են իրենց աջակցությամբ եւ աղոթքներով միանալ հայ ժողովրդին: Նրանց թվում է նաեւ Հոլիվուդում հայտնի հայ դերասան Մարկո Խանը, որը Facebook-ի իր էջում հանդես է եկել գրառմամբ. «Իմ հայրենակից եղբայրներն ու քույրերը, զինվորները պայքարում են Ադրբեջանի առավել զինված եւ ագրեսիվ զորքերի դեմ, որոնք կռվում են մի բանի համար, որն իրենց չի պատկանում...Բայց ադրբեջանցիները չեն հասկանում, որ Հայոց բանակը մեծ սիրտ ունի եւ կռվում է հանուն մեր պատմական տարածքի՝ Արցախի համար: Կեցցեն իմ եղբայրներն ու քույրերը, որոնք պայքարում են Ադրբեջանի ղեկավարի գլխավորած այդ ագրեսիվ զորքի դեմ: Դիկատտոր, որը խեղդվում է իր սեփական երկրի հարստության մեջ եվ այս պատերազմն օգտագործում է, որպեսզի թաքցնի իր եւ իր ընտանիքի գողությունը, որն արվել է իրենց սեփական ժողովրդից: ԱՄՆ-ն այդ մարդասպանին ոչինչ չպետք է պարգևի: Աստված ձեզ պահպան»,-գրել է Խանը:

Մատաղիսի մարտերում մեծ կորուստներ են ունեցել Թուրքիայից եկած զինյալները, նրանց մոտ խուճապ է սկսվել

14:22, 05.04.2016

Մատաղիսի ուղղությամբ ապրիլի 4-ին տեղի ունեցած ծանր մարտերում հակառակորդի կողմում խուճապ է սկսվել եւ նրանք դիակներ թողնելով դիմել են փախուստի: Այս մասին Արցախից հաղորդում է «Հետքի» խմբագիր Էդիկ Բաղդասարյանը՝ հավելելով, որ իրականությամբ չեն համապատասխանում ադրբեջանական մամուլի տեղեկությունները, թե իրենք գրավել են Մատաղիսը: «Երեկ այդ հատվածում ծանր մարտեր էին: Ադրբեջանական զինուժն իր ունեցած գրեթե ողջ զինտեսականին օգտագործել է նաեւ այդ ուղղությամբ: Ցավոք, ունեցել ենք զոհեր, երեկ ՊԲ-ն նրանց մասին հաղորդել է: Ադրբեջանական զինուժի ներկայացուցիչները ենթադրել են, թե դրանից հետո հայկական ուժերը նահանջելու են եւ իրենք հաղթական մտնելու են Մատաղիս: Բայց լրիվ հակառակն է եղել, այդ գնդակոծություններից, հրետակոծություններից հետո հայկական զինուժը համարժեք պատասխան է տվել: Հրետանավորները մանրամասն «ծեծել» են հակառակորդին, ինչպես սպաներից մեկն ասաց»,-նշել է նա: Բաղդասարյանի խոսքով՝ փախուստը հակառակորդի կողմում է սկսվել. «Նորից դիակներ են թողել ռազմի դաշտում: Այսօր կփորձենք նաեւ Ղարաբաղի իշխանություններից տեղեկություն ստանալ, թե ինչ է լինելու հակառակորդի դիակների հետ, արդյոք դրանք հանձնելու մասին բանակցություններ ընթանո՞ւմ են, Կարմիր խաչի ներկայացուցիչները դիմե՞լ են, արդյոք, կողմերին»: Ինչպես արդեն հայտնել է Ղարաբաղի ՊՆ-նի ներկայացուցիչը՝ հայկական կողմն ունի անհետ կորածներ: Պաշտպանության նախարարության տարբեր ներկայացուցիչներ սկսել են հաստատել, որ Ադրբեջանի կողմից կռվում են Թուրքիայից եկած զինյալներ եւ հենց նրանք են ունեցել մեծաթիվ կուրուստներ, եւ խուճապը դրանից է սկսվել հակառակորդի մոտ»,-ընդգծել է Բաղդասարյանը:

Արցախին աջակցություն են հայտնում սփյուռքի բոլոր համայնքներից

23:57, 03.04.2016



Մեր միասնությունն ի գորու է դիմակայելու ադրբեջանական ցանկացած սադրանքի: Այս մասին ապրիլի 3-ին Ստեփանակերտ ժամանած կամավորների հետ հանդիպմանը ասել է Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը: Նա նշել է, որ շփման գծում լարվածության վերջին օրերին աջակցության բազմաթիվ զանգեր են ստացել սփյուռքից: «Իմացեք, որ մենակ չենք, սփյուռքը մեզ հետ է: Այս օրերին Ավստրալիայից մինչև Կանադա, Արգենտինայից մինչև Նոլսիբիբրսկ ստանում ենք զանգեր կամավորների, բարեգործների կողմից, բոլորը մեզ հետ են»,- ասել է վարչապետը:

Ադրբեջանական վայրագությունները Թալիշում

22:05, 03.04.2016



Ադրբեջանական վայրագություններն իրենց ողջ «հմայքով» ի ցույց են դրվել Մարտակերտի Թալիշ գյուղում, որը հայկական ուժերն արդեն ազատագրել են: Ադրբեջանի զորամիավորումներն ապրիլի 2-ին մտնել էին Թալիշ գյուղ, որտեղ այդ պահին մնացել էին մի քանի խաղաղ բնակիչներ, հաղորդում է Hetaq.am-ը: Ադրբեջանցիները գնդակահարել են Վալերա Խալափյանին եւ նրա կնոջը՝ Ռազմելային, կտրել նրանց ականջները: Նրանք գնդակահարել են նաեւ 1924 թվականին ծնված Մարուպա Խալափյանին: Նշենք, որ Թալիշ գյուղը Լեռնային Ղարաբաղի հյուսիսային սահմանամերձ բնակավայր է:

Հիշեցնենք, որ ապրիլի 2-ի գիշերը իրավիճակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կտրուկ լարվել է: Խրոնիկ բնույթ կրող կրակոցներից եւ մասնակի դիվերսիոն հետախուզական փորձերից Ադրբեջանն անցում է կատարել մասշտաբային հարձակման շփման գծի ողջ երկայնքով՝ օգտագործելով հրետանի, ծանր տեխնիկա եւ ավիացիա: Երկու կողմերից էլ կան զոհեր:

Վերջին տվյալներով Ադրբեջանը կորցրել է 2 ուղղաթիռ, 14 տանկ, 2 անօդաչու սարք, 5 միավոր այլ զրահատեխնիկա: Ղարաբաղյան կողմը կորցրել է մեկ տանկ:

Ղարաբաղյան կողմից զոհվել է 18, վիրավորվել շուրջ 40 մարդ: Չհեր կան նաեւ քաղաքացիական բնակչության շրջանում: «Գրադ» կայանից արձակված կրակոցից մահացել է 12-ամյա երեխա, եւս երկուսը վիրավոր են:



Լուսանկարները՝ PHOTOLURE-ի եւ Հսկոր Պողոսյանի

Եվրոպայում եւ ԱՄՆ-ում հայերը հակաադրբեջանական ցույցեր են անցկացնում

01:01, 06.04.2016

Փարիզում Ադրբեջանի դեսպանության առջև ապրիլի 5-ին ցույց է անցկացվել, որը նախաձեռնել է Ֆրանսիայի հայկական երիտասարդական Nor Serund կազմակերպությունը: Շուրջ 500 մարդ դեսպանությունից երեք հարյուր մետր հեռավորությամբ վանկարկել է. «Ալիեւը մարդասպան է», «Ալիեւ, հեռացի՛ր մեր հողերից», «Դատապարտել Ալիեւին»: Հավաքվածները Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչում են պահանջել: Այս մասին NEWS.am-ին տեղեկացրեց Nouvelle d'Armenie պարբերականի թղթակից Ժան Էքյանը:

Միաժամանակ, երբ նա ցույցի մասին տեսանյութով հոդված է հրապարակել, պարբերականի կայքը կտորել են: ԼՂՀ դրոշներով ցույց է անցկացվել նաեւ Վիեննայում, որտեղ ապրիլի 5-ին հատուկ նիստ էր գումարել ԵԱՀԿ Մշտական խորհուրդը: Ակցիայի ավարտին Մինսկի խմբին ուղղված նամակ է փոխանցվել ԵԱՀԿ-ին, որում Ավստրիայի հայկական կազմակերպությունները խստորեն դատապարտել են Ադրբեջանի գործողությունները:

Ֆրանսիայի Հայկական կազմակերպությունները համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանը թղթակցին հայտնեց, որ հակաադրբեջանական ցույցեր են անցկացվել նաեւ Եվրոպայի մի շարք այլ քաղաքներում՝ Լոնդոնում, Աթենքում եւ Ստոքհոլմում, ինչպես նաեւ Բեյրութում: Հայերը բողոքի ցույցի են դուրս եկել նաեւ Լոս Անջելեսում:

Իտալական պարբերական. Ղարաբաղում պատերազմող ադրբեջանցի զինվորների շարքերում ԻՊ-ի զինյալներ կան

02:00, 06.04.2016

Այս օրերին Ղարաբաղում պատերազմող ադրբեջանական զինվորների շարքերում Սիրիայում եւ Իրաքում հավաքագրված «Իսլամական պետություն» խմբավորման զինյալներ կան: Այս մասին գրել է իտալական Sponda Sud պարբերականը:

«Ներկայում Ադրբեջանի տարածքում մեծ թվով ծայրահեղականներ են հավաքվել, որոնք պատերազմում էին «Իսլամական խալիֆայության» դրոշի ներքո: Վերջին ամիսներին Անկարայի եւ Բաքվի լրատվամիջոցներում մի քանի հոդվածներ հրապարակվեցին, որտեղ նշվում էր Սիրիայից եւ Իրաքից վերադարձած ադրբեջանցի լեգեոներների մասին: Շուրջ 300-ը սպանվեցին մարտերում, բայց ավելի քան 2500-ը նոր գործատուի՝ Ադրբեջանի տարածքում են: Եվ Ալիեւը կարող է նրանց կանոնավոր գորքերի հետ միասին Լեռնային Ղարաբաղ ուղարկել», - գրել է պարբերականը:

Աշտարակում կկառուցվի մինչև երկու մեգավատ հզորությամբ արևաջերմային տուրբինային էլեկտրակայան

06 Ապրիլի 2016, 13:43



Կառավարության ընդունած որոշմամբ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Էջմիածին խճուղի հասցեում գտնվող ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ին պատկանող 49,524 հեկտար հողամասից 5 հա-ն նվիրաբերվելու է «Անի-Արմին» ընկերությանը՝ նորագույն տեխնոլոգիաների հիման վրա, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ մինչև երկու մեգավատ հզորությամբ արևաջերմային տուրբինային էլեկտրակայանի կառուցման առաջնային ծրագրի իրականացման նապատակով:

ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանը նշեց, որ ընկերությունը նախատեսում է ծրագրի իրականացման համար առաջիկա երեք տարվա ընթացքում ներդնել 4 միլիոն 180 հազար դոլար: Սահակյանի խոսքով՝ բիզնես ծրագրում նշված աշխատանքները չկատարելու դեպքում պայմանագիրը

Ադրբեջանցիների կողմից շարքային Սլոյանի գլխատումը ԻՊ-ին բնորոշ գործելաճ է. Ազիզ Թամոյան

06 Ապրիլի 2016, 00:12

Հայաստանի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանն ադրբեջանցիների կողմից ազգությամբ եզդի շարքային Քյարամ Սլոյանի գլխատումը որակում է անմարդկային, ինչը բնորոշ է «Իսլամական պետության»

ահաբեկիչներին: «Նման գործելաճանճը բնորոշ է ճայրահեղական իսլամիստներին, նրանց անմարդկային բնավորությանը, նրանք գիշատիչ կենդանիներ են: Աղբրեջանցիներն էլ նույն բարբարոս թուրքերն են և ոչնչով չեն տարբերվում նրանցից: Այդպիսիք աշխարհի «երեսին» չպետք է մնան», - «Արմենայրեն»-ի հետ գրույցում նշեց Թամոյանը:



Հայաստանի եզդիների միության նախագահն ընդգճեց, որ հպարտանում է Քյարամ Սոյանով և ավելացրեց, որ Հայաստանի եզդի համայնքը պատրաստ է կանգնել հայ եղբայրների կողքին և պաշտպանել հայոց հողը: «Լեռնային Ղարաբաղը պատմական հայկական հող է և Աղբրեջանի պյօրվա գործողություններն անհիմն են: Ինչպես ԱՊՀ այլ երկրներ, ԼՂ-ն նույնպես ինքնորոշվել է և հաջողությամբ գնում է զարգացման ճաապարհով», - ասաց Թամոյանը՝ տեղեկացնելով, որ ներկայում հայկական բանակում ճառայում են 100-ից ավելի եզդիներ, իսկ տասնյակ կամավորներ հերթագրվել են Լեռնային Ղարաբաղի պաշտպանությ անը մասնակցելու նպտակով:

Հայկական հատուկ նշանակության ջոկատը հատուկ գործողություն է արել

07 Ապրիլի 2016, 23:29



ՀՀ ՊՆ խոսնակը Ֆեյսբուքի իր էջում գրել է. ԼՂՀ ՊԲ-ը հաղորդում է, որ հայկական «սպեցնազը» աղբրեջանական Տափկարա-Կոյունլու գյուղի հատվածից առգրավել է բեռնատար «Ուրալ» մակնիշի զինվորական ունեցվածքով բեռնված «H919QQ» համարանիշի մեքենա:

Իսրայելն Աղբրեջանին զինում է ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներով

07 Ապրիլի 2016, 14:13

Տեղեկատվական տեխնոլոգիաներում առկա մեճ ներուժը Հայաստանը պետք է կիրառի ռազմական ոլորտում: Այս մասին ապրիլի 5-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց տեղեկատվական անվտանգության հարցերով փորճագետ Սամվել Մարտիրոսյանը: «Եղաճ սիսայների շտկման ժամանակն է: Ակնհայտ է, որ պատերազմը բարձր տեխնոլոգիական ոլորտ է անցնում. երկու կողմից կիրառվում են, օրինակ, անօդայնու թռչող սարքեր: Սա ավելի մտահոգիչ է դառնում, քանի որ մեր կորուստների զգալի տոկոսը կապ ունի հենց Աղբրեջանի կողմից կիրառված դրոնների հետ: Պատերազմը դուրս է գալիս որակական նոր մակարդակի», - «Արմենայրեն»-ի փոխանցմամբ՝ նշեց Սամվել Մարտիրոսյանը: Տեղեկատվական անվտանգության հարցերով փորճագետի խոսքով՝ «Մմերջ»-ի ամեն զարկն, օրինակ, Աղբրեջանի համար կազմում է 1,5 միլիոն դոլար, սակայն միշտ չէ, որ կարողանում է կորուստներ հասցնել այդ զարկով: «Եկել է ժամանակը ներգրավելու ՏՏ ոլորտի մասնագետներին», նշեց նա՝ հավելելով, որ Աղբրեջանը ռազմական գնումներ է կատարում ոչ միայն Ռուսաստանից, այլև Իսրայելից: «Իսրայելն Աղբրեջանին զինում է ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներով, ինչը լուրջ խնդիր է մեր բանակի համար», - նշեց նա Սամվել Մարտիրոսյանը:

Դիվերսիայի ընթացքում հակառակորդը մարտադաշտում է թողել իր կապիտանի դիակը

07 Ապրիլի 2016, 10:59



Ապրիլի 6-ի լույս 7-ի գիշերը դարաբաղա-աղբրեջանական հակամարտ գորքերի շփման գճի հյուսիսարևելյան (Թալիշի) ուղղությամբ հակառակորդը ճեռնարկել է դիվերսիոն հետախուզական գործողություն: ՊԲ առաջապահ ստորաբաճանումները ժամանակին հավաստանշելով թշնամական իմքի առաջխաղացումը՝ անցել են կազմակերպված պաշտպանության: Ծավաված մերճամարտի արդյունքում, հակառակորդը մարտադաշտում թողնելով Աղբրեջանի ՉՈւ կապիտան, Նավթյան քաղաքի բնակիչ, 1979թ. ճնված Վազիֆ Դիլգամ օղյու Բայրամովի դիակը՝ հետ է շարտվել: Կատարվածը հերթական անգամ փաստում է, որ աղբրեջանական կողմը ոչ միայն չի հարգում նախօրյակին ճեռքերված կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը, այլև սաղբիչ քայլերով փորճում է նպատակաուղղված կերպով ապակայունացնել առանց այն էլ պայթու նավտանգ իրավիճակը: Այս մասին տեղեկացնում է ԼՂՀ ՊԲ մամուլի ճառայությունը:

Չհասցրինք փրկել ծնողներին. Թալիշցի Գայանեն՝ Ադրբեջանի վայրագությունների մասին

07.04.2016

Ապրիլի 2-ին Ադրբեջանի զորամիավորումների կողմից Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում դաժանաբար խոշտանգված ու սպանված տարեց ամուսինների դուստրը՝ 40-ամյա Գայանե Նազունցը, հրաշքով է ողջ մնացել:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական շփման գծում լարվածության հետևանքով Թալիշում արկակործման է ենթարկվել նաև իրենց տունը, Նազունցների ընտանիքը ստիպված է եղել հեռանալ գյուղից եւ հաստատվել Արոլյան քաղաքում:

Նախորդ օրերին կատարվածի մասին Գայանեն դժվարությամբ է պատմում:

«Ապրիլի 1-ի գիշերն էր, արկերի ու պայթյունների ձայնից վեր կացանք, ապակիները թափվեցին, ամբողջ հողը լցվեց վրաներ: Գիշերանցով, բանով իջանք պաղվալ, կառավարների, սեղանների տակ թաքնվեցինք: Ախպերս էր Թալիշում ապրում, զանգեց՝ ասեց թշնամին կրակում է, ես իմ վեց երեխուն վերցրել, տանում եմ ապահով տեղ, դուք էլ պաղվալում մնացեք, մինչև դուք էլ դուրս կգաք»,- պատմում է Գայանեն:

Առավոտյան մինչև ժամը 7-ը ստիպված են եղել սպասել թաքստոցում, ապա նստել են ամուսնու մեքենան՝ փորձելով լույս առաջ լքել տարածքը:

«Նատեցինք մեքենան, ադրբեջանցիք սկսեցին կրակել մեքենայի վրա: Ամուսնուս ասի՝ չենք փրկվի, ասեց՝ դե որս կփրկվենք, կփրկվենք: Արագ քշեց գյուղից դուրս, հետո հեռվից տեսանք, որ մեր ամբողջ գյուղը ծխի մեջ է»,- ասում է նա:

Գայանեի խոսքով՝ եղբայրը մտադիր է եղել կնոջն ու անչափահաս վեց երեխաներին գյուղից դուրս հանելուց հետո վերադառնալ Թալիշ՝ տարեց ծնողների ու տատի հետևից: Մի քանի օր տեսած արկակործման հետևանքով, սակայն, չի կարողացել գյուղ վերադառնալ:

«Երկու օր անց ինտերնետում նկարները տեսանք, իմացանք, որ ադրբեջանցիները մտել են գյուղ ու սպանել ծնողներին ու տատիս: Երեկ թաղումն էր, թաղմանն էլ չկարողացանք ներկա լինել»,- ասում է նա:

Գայանեի ականջներում դեռ հնչում են կրակոցների ու արկակործման ձայները, մինչև հիմա միայն մի քանի չի կարողանում հավատալ ոնց կարողացան ողջ մնալ:

«Մտածում էի՝ սա վերջն է, հաստատ չենք ապրի, զարմանում եմ ոնց դուրս եկանք այդտեղից»,- նշում է նա:


Գայանեի սկեսուրը՝ 85-ամյա Նորա Նազունցը, առաջին անգամը չէ, որ ապրում է պատերազմի արհավիրքը. ականատես է եղել նաև Արցախյան ազատամարտին, բայց վերջին օրերի դեպքերի դաժանության հետ ոչինչ համեմատել չի կարողանում:

«Մա ուրիշ արհավիրք էր, սրա նման քան չէր եղել: Արցախյան պատերազմի ժամանակ կարողացանք ոտքով գյուղից դուրս գալ, հիմա մեքենայով գնալիս էլ կրակում էին»,- ասում է նա:

Վերջին օրերին Արոլյան քաղաքում հանգրվանած Նազունցների ընտանիքը հայրենի Թալիշում թողել է ավերված տունն ու ապրուստի բոլոր միջոցները, թե ինչպես ու որտեղ են ապրելու հետո, դեռ չեն պատկերացնում:

«Էնտեղ գյուղ կա՞, որ գնանք ապրենք. ավերակ է»,- նշում է տիկին Նորան, իսկ հարսը՝ Գայանեն, պատասխանում է Մարտակերտում ծառայող որդու հեռախոսազանգին, ով ամեն զանգի հետ ասում է. «Ծառայությունս ավարտեմ,

գնալու եմ էի իմ տանն ապրեմ, Թալիշն իմ գյուղն է, այնտեղ էս եմ ապրելու»:



Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ավելի քան 520 հասարական կազմակերպություններ համատեղ հայտարարությամբ դիմել են Եվրոպական խորհրդարանին

11 Ապրիլի 2016, 19:35



Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակությունը ս.թ. ապրիլի 11-ին համատեղ կոչով

դիմել է Եվրոպական խորհրդարանին, որում, մասնավորապես, անդրադարձել է ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից ԼՂՀ դեմ սանձազերծած լայնածավալ պատերազմական գործողություններին և չորս հիմնական պահանջ ներկայացրել այդ առնչությամբ: Եվրոպական խորհրդարանին ուղղված համատեղ կոչը ստորագրել են Արցախի և Հայաստանի ավելի քան 520 հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, ՉԼՄ-ների գլխավոր խմբագիրներ, ովքեր պատերազմական գործողությունների ողջ ընթացքում աշխատել են շփման գծում, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող կազմակերպությունների ղեկավարներ:

Ներկայացված ծավալուն փաստաթուղթը Եվրախորհրդարանի պատգամավորների ուշադրություն է հրավիրել Ադրբեջանի կողմից միջազգային կոնվենցիաների ու պարտավորությունների կոպտագույն խախտումների վրա՝ հատուկ ընդգծելով ԼՂՀ դեմ ադրբեջանական ագրեսիայի կանխամտածված և հարձակողական բնույթը, ուղղված քաղաքացիական բնակչության դեմ՝ ներառյալ երեխաների և ծերերի: «Անհնար է պատկերացնել որևէ ինչ հիմնավորում, որը կարող է արդարացնել խաղաղ բնակչության նկատմամբ նման վայրենի վերաբերմունքը», - ասված է փաստաթղթում, որում նաև նշված է ադրբեջանական հրետակոծության հետևանքով գոհված 12-ամյա Վաղինակ Գրիգորյանի, և ևս երկու վիրավորված դպրոցականներ մասին: Նշվում է նաև Արցախի Թալիշ գյուղում ադրբեջանցի զինվորների կողմից խոշտանգված, խեղված և սպանված Ղափլանյան ընտանիքի երեք անդամների դեպքը:

«Ի դեմս այլ վայրագությունների՝ ԼՂՀ Պաշտպանական բանակի զինվորներ Հայկ Թորոյանը, Հրանտ Ղարիբյանը և Զյաթամ Մոյսանը գլխատվեցին և ենթարկվեցին ԴԱԲԳ-ին արժանի սահմոկեցուցիչ կոտորածների: Ադրբեջանական բանակի գործողությունները կոպտորեն խախտում են մարդասիրական կոնվենցիաները, հակասում պատերազմի օրենքներին և սովորույթներին, ինչպես նաև դուրս են անն տեսակ քաղաքակրթական նորմերից», - վկայակոչում է փաստաթուղթը:

Համատեղ կոչով հանդես եկած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, այդ թվում նաև Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի ազգային պատճառով, որը ներկայացված է տարբեր հասարակական-քաղաքական ճամբարներից 215 ՀՎ-ներով, ցուցաբերել են աննախադեպ միասնականություն իրենց դիրքորոշման հարցում, հայտարարելով իրենց անվերապահ աջակցության մասին: Խստորեն դատապարտելով Ադրբեջանի՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության և վերջինիս բնակչության իրականացրած վայրագությունները և պատերազմական հանցագործությունները, նրանց Եվրոպական խորհրդարանից պահանջել են.

- խստորեն դատապարտել Ադրբեջանի՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության և վերջինիս բնակչության իրականացրած վայրագությունները և պատերազմական հանցագործությունները,

- խստորեն դատապարտել Թուրքիայի և Իսլամական համագործակցություն կազմակերպության կոչերը ուղղված Ադրբեջանին, որով նրանք հորդորում են վերջինիս շարունակել ռազմական ագրեսիան ընդդեմ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության,

- վերահաստատել, որ հսկանարտության կարգավորման միակ ընդունելի ճանապարհը խաղաղ բանակցություններն են և

- կոչ անել ԵԱՀԿ Մինսկի խմբին վերականգնել Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կարգավիճակը որպես բանակցությունների լիիրավ կողմ», - ասված է փաստաթղթում:

Հայաստանի եվրոպացի բարեկամներ (EuFoA) միջազգային կազմակերպությունը հայարտ է այս նախաձեռնության մասը լինելու համար և պատիվ ունի փոխանցելու այս կոչը Եվրախորհրդարանի պատգամավորներին՝ ապրիլի 12-ին կայանալիք Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին լսումներին ընդառաջ:

Ադրբեջանական կողմում հայ զինծառայողների մարմինները խոշտանգվել են. Արցախը պահանջում է պատժել

11 Ապրիլի 2016, 13:11



ԼՂՀ ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովի հայտարարությունը

Համաձայն նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության՝ ա.թ. ապրիլի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ, Բաշ Բարվենդ բնակավայրի մոտակայքում իրականացրել է զոհվածների մարմինների փոխանակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև: Փոխանակման ընթացքում դարաբաղյան կողմին է հանձնվել ա.թ. ապրիլի 2-5 Ադրբեջանի կողմից իրականացված լայնածավալ ռազմական ագրեսիայի արդյունքում առաջնագծում զոհված ԼՂՀ Պաշտպանության բանակի 18 զինծառայողի մարմին:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցների ներկայությամբ ԼՂՀ ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ ադրբեջանական կողմից հանձնված զոհվածների բոլոր մարմինները ենթարկվել են խոշտանգման ու անարգանքի: Այս արարքը, հանդիսանալով հակահումանիզմի աղաղակող դրսևորում, հակասում է պատերազմի օրենքներին ու սովորույթներին և կոպտորեն ոտնահարում միջազգային մարդասիրական իրավունքի, մասնավորապես, 1949 թ. Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին Ժնևյան 1-ին կոնվենցիայի, 1949 թ. Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին Ժնևյան 3-րդ կոնվենցիայի և 1977 թ. Միջազգային զինված ընդհարումների զոհերի

պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին արձանագրության պահանջները:

Ղարաբաղյան կողմը հետամուտ է լինելու, որպեսզի ադրբեջանական կողմի նման պահվածքը ենթարկվի միաջազգային հանրության և մասնագիտացված կառույցների խստագույն դատապարտմանը, իսկ մեղավորները կրեն պատասխանատվություն:

Քյարամ Սոյանին գլխատելով՝ Ադրբեջանը գործեց իրական ահաբեկչական խմբավորման նման. Բորիս Մուրազի

12:31, 11.04.2016



Եփման գծում մարտական գործողությունների ժամանակ զոհված ժամկետային զինծառայող Քյարամ Սոյանին գլխատելով Ադրբեջանը ցույց տվեց իր իրական դեմքը: Այս մասին այսօր՝ ապրիլի 11-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց «Մինչքար եզդիների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ Բորիս Մուրազին:

«Նրա սպանությամբ, գլխատմամբ միջազգային հանրությանը կարող ենք ցույց տալ Ադրբեջանի դեմքը, որը ահաբեկչական խմբավորումներից ոչնչով չի տարբերվում: Բոլոր քաղաքակիրթ երկրները պատերազմի ընթացքում չեն խոշտանգում զոհված քաղաքացիների, զինվորների մարմինները, իսկ Ադրբեջանը գործեց իրական ահաբեկչական խմբավորման նման: Միջազգային ezidipress.com-ի միջոցով հրապարակել են գլխատված Սոյանի լուսանկարները, որից հետո նաև ՄԱԿ-ն անդրադարձավ Քյարամ Սոյանին գլխատելուն, Թալիշի տարեց բնակիչների մարմինների խոշտանգմանը: Ես, իհարկե, հույս չեմ կապում միջազգային կառույցների հետ, սակայն, կարծում եմ, որ պետք է այդ լուսանկարները հրապարակել եւ ցույց տալ Ադրբեջանի իրական դեմքը»,- ասաց նա:

Բորիս Մուրազին նշեց, որ զոհված զինծառայող Քյարամ Սոյանի ընտանիքը շատ ծանր պայմաններում է ապրում եւ նրանց օգնելու համար ստեղծվել է նախաձեռնող խումբ՝ տրամադրվող օգնությունը տեղ հասցնելու, ընտանիքին աջակցելու համար:

«Նախաձեռնող խումբ ենք ստեղծել, հավաքվել է որոշակի գումար, որոշ խնդիրներ լուծեցինք: Բացվել է հաշվեհամար, որը կփոխարինվի Սոյանների անձնական հաշվեհամարով, անմիջապես գումարը կփոխանցվի նրա ընտանիքին»,- ասաց նա:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղում ապրիլի 9-ին վերահուղարկվորել

են շփման գծում մարտական գործողությունների ժամանակ զոհված ժամկետային զինծառայող Քյարամ Սոյանին, քանի որ նրա հարազատներին է հանձնվել զինծառայողի գլուխը, որն ադրբեջանցիները կտրել էին:

Հիշեցնենք, ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը նշել էր, որ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում զոհվածների մարմինների որոնման եւ դուրս բերման աշխատանքների ընթացքում վերադարձվել ԼՂՀ ՊԲ գլխատված զինծառայող Քյարամ Սոյանի գլուխը: Բաբայանի տեղեկացմամբ, ադրբեջանցիները, որոնց թվում նաև թուրքական ահաբեկիչներ են եղել, գլուխը տարել են գյուղից գյուղ եւ բղավել, որ սա եզդի ժողովրդի ցեղասպանության շարունակությունն է, եւ որ նույնը կկրկնվի նաև քուրդ ժողովրդի հետ, եթե նրանք համարձակվեն հարձակվել թուրք ժողովրդի վրա:

Եվրախորհրդարանի պատգամավորը կոչ է արել ճանաչել ԼՂ անկախությունը

12 Ապրիլի 2016, 19:11



Եվրախորհրդարանի Կանաչներ/Եվրոպական ազատ դաշինքի ներկայացուցիչ Ժոզեֆ-Մարիա Տերկլաբրասար (Իսպանիա) ելույթ է ունեցել ԵԽ լիագումար նիստում՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին ներառել Մինսկի խմբի շրջանակում ընթացող բանակցություններում:

«1991 թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի բնակչության զերակշռող մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախության հանրաքվեում: Այս ժողովրդավարական գործընթացին ի պատասխան Ադրբեջանը ռազմական հարձակում սկսեց, ինչի հետևանքով շուրջ 30 հազար զոհ գրանցվեց: Արդյունքում Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կնքվեց հրադադարի համաձայնագիր: 1992 թվականին Մինսկի խմբի ստեղծումը բեկումնային էր, սակայն Ադրբեջանը հրաժարվել է հրադադարի ռեժիմի խախտումներն արձանագրելու նպատակով հետաքննության մեխանիզմների կիրառումից:

ԼՂ-ն ամբողջությամբ ժողովրդավարական ինստիտուտ է՝ օրինակելի դատական համակարգով և կոռուպցիայի ցածր մակարդակով: Այդ իսկ պատճառով, մենք պահանջում ենք Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին ներառել Մինսկի խմբի բանակցային գործընթացի մեջ, քանի որ նրանք են որոշում երկրի բնակիչների ապագան: Ռազմական հակամարտությունը մեկընդմիջտ լուծելու նպատակով անհրաժեշտ է միջազգայնորեն պաշտոնապես ճանաչել նոր անկախ պետությունը»,- «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ասել է իսպանացի խորհրդարանականը:

Ռազմարդյունաբերության ոլորտում լայնածավալ աշխատանքներ են իրականացվում. նախարար

12 Ապրիլի 2016, 14:26



Հայաստանում ռազմարդյունաբերության ոլորտում մեծածավալ աշխատանքներ են իրականացվում, առաջիկայում հնարավոր կլինի ոլորտում մի քանի յուրօրինակ աշխատանքային կենտրոնների ակնառու լինել: «Արմենարես»-ի փոխանցմամբ՝ այս մասին ապրիլի 12-ին լրագրողների հետ զրույցում հայտարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանը: «Միանշանակ է, որ մենք ռազմարդյունաբերական համալիր պետք է ունենանք, առանց որի հնարավոր չէ ապահովել բարձր պաշտպանունակություն: Մա այն հատման կետն է, որտեղ տնտեսությունն ու անվտանգությունն ապահովում են միացյալ համակարգ ու ձևավորում պաշտպանության հզորացումը: Դա վերաբերում է արդյունաբերության հիմնական ուղղություններին՝ սկսած սարքաշինությունից, բարձր տեխնոլոգիաներից՝ ավարտած ռազմական արդյունաբերության մեջ մեր ամբողջ նարտարագիտական ներուժի ներդրմանը», - ասաց նախարարը:

Փառք մարտիրոսվածներին

Հայկական կողմն ընդհանուր 92 զոհ է ունեցել. ՊՆ

13 Ապրիլի 2016, 23:40

ՊՆ-ը հրապարակել է ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած մարտական գործողությունների հետևանքով զոհվածների մասին տեղեկանքը:

Մարտական կորուստներ՝ ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում հակառակորդի հետ անմիջական շփման գծում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ զոհվել են 64 զինծառայողներ և 13 աշխարհագորայիններ ու պահեստագորայիններ՝ սպաներ՝ 15,

պայմանագրային զինծառայողներ՝ 15, ժամկետային պարտադիր զինծառայողներ՝ 34, աշխարհագորայիններ՝ 11, պահեստագորայիններ՝ 2, Ընդամենը՝ 77 զոհ Անհայտ կորած՝

1 սպա՝ կապիտան Գաբրիել Արզիշտի Արծվիկ: Ոչ մարտական կորուստներ ապրիլի 2-ից 13-ն ընկած ժամանակահատվածում սահմանային լարվածության ուժգնացման պայմաններում կորուստները կազմել են. զինծառայողներ՝ 9,



աշխարհագորայիններ՝ 2, հակառակորդի հանցավոր գործողությունների արդյունքում զոհված ԼՂՀ խաղաղ բնակիչներ՝ 4, Ընդամենը՝ 15 զոհված/մահացած: Ընդհանուրը՝ 92 զոհված/մահացած:

ԱՄՆ-ը պետք է միջոցներ ձեռնարկի Ադրբեջանին պատասխանատվության կանչելու ուղղությամբ. ԱՄՆ կոնգրեսական 10:24, 17.04.2016



Միացյալ Նահանգները եւ միջազգային հանրությունն, ընդհանուր առմամբ, պետք է միջոցներ ձեռնարկեն Ադրբեջանին պատասխանատվության կանչելու ուղղությամբ, կամ նրանք կշարունակեն սրել հայերի դեմ բռնության գործողությունների էսկալացիան: Այս մասին հայտարարել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Հետախուզության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ջեյմի Սիլեյերը: «Ես վճռականորեն դատապարտում եմ բռնությունն այն մարդկանց նկատմամբ, որոնք պարզապես ուզում են ապրել խաղաղ ինքնորոշման պայմաններում», - ընդգծել է նա:

ԱՄՆ Հոնոլուլու շրջանի եւ քաղաքի Խորհուրդի բանաձևը՝ Արցախը ճանաչելու մասին

17:23, 21.04.2016

Ապրիլի 20-ին ԱՄՆ Հավայի նահանգի Հոնոլուլու շրջանի եւ քաղաքի Խորհուրդը ընդունել է 16-78, CD1 բանաձևը, որով քաջալերում է եւ սատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շարունակական ջանքերին՝ երաշխավորելու իր քաղաքացիների այն իրավունքները, որոնք բնորոշ են ազատ եւ անկախ հասարակությանը: Բանաձևը կոչ է անում ԱՄՆ նախագահին եւ Կոնգրեսին սատարել միջազգային հանրության ջանքերը՝ ուղղված

Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության հարցերի արդար եւ երկարատեւ լուծմանը:



Բանաձեւում, մասնավորապես, ասվում է «ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղը, որը հայտնի է նաև Արցախ անվանմամբ, դեպի ծով ելք չունեցող տարածաշրջան է, որը պատմականորեն հանդիսանում է հայկական տարածք եւ նրա բնակչության մեծամասնությունը կազմում են էթնիկ հայեր, ինչպես նաև ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ շրջանը 1921 թ. անջատվել է Հայաստանից եւ փոխանցվել Խորհրդային Ադրբեջանի իշխանության տակ որպես Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, ինչպես նաև

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղում սկիզբ է դրվել ազգային-ազատագրական շարժմանը, երբ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ներկայացնող ընտրված օրենսդիր մարմինը որոշում է ընդունել Լեռնային Ղարաբաղը Սովետական Մոցիախտական Հայաստանին վերադարձնելու մասին, ինչպես նաև

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի օրենսդրական մարմինը հռչակել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ այն ժամանակ գործող օրենսդրության համաձայն, ինչպես նաև

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդը քվեարկել է հօգուտ անկախության, եւ 1992 թ. հունվարի 6-ին ժողովրդավարական ճանապարհով ընտրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդիր մարմինը պաշտոնապես հայտարարել է անկախության մասին, ինչպես նաև

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ անկախության հռչակումից ի վեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կառուցել է ազատ շուկայական տնտեսությամբ եւ կենսունակ քաղաքացիական հասարակությամբ ժողովրդավարական պետություն, որը անցկացնում է միջազգային ոչ կառավարական դիտորդների կողմից որպես ազատ եւ արդար ճանաչված խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ:

ՈՐՈՇԵԼ Է, որ Հոնոլուլուի քաղաքի եւ շրջանի Խորհուրդը քաջակերում է եւ սատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շարունակական ջանքերին՝ երաշխավորելու իր քաղաքացիների այն իրավունքները, որոնք բնորոշ են ազատ եւ անկախ հասարակությանը:

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇԵԼ Է, որ Խորհուրդը կոչ է անում ԱՄՆ Նախագահին եւ Կոնգրեսին սատարել միջազգային հանրության ջանքերին՝ ուղղված ռազմավարական

կարեւորություն ունեցող Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության հարցերի արդար եւ երկարատեւ լուծմանը:

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇԵԼ Է, որ սույն Բանաձեւի պատճենները կփոխանցվեն Միացյալ Նահանգների նախագահին, ԱՄՆ Սենատի Նախագահին, Ներկայացուցիչների պալատի Խոսնակին եւ Միացյալ Նահանգների Կոնգրեսում Հավայիի պատվիրակության յուրաքանչյուր անդամին:

Բակո Սահակյանը Ստեփանակերտում ծաղիկներ է դրել Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հուշակոթողին

11:56, 24.04.2016



Ապրիլի 24-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հանրապետության բարձրաստիճան ղեկավարության ուղեկցությամբ այցելել է Ստեփանակերտի հուշահամալիր եւ ծաղիկներ դրել Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

«Ավրորա» մրցանակը ստացավ Բուրունդիից Մարգարեթ Բարանկիցեն

22:07, 24.04.2016

Բուրունդիից Մարգարեթ Բարանկիցեն այսօր՝ ապրիլի 24-ին հռչակվել է «Ավրորա» մրցանակաբաշխության դափնեկիրը: Մրցանակը նրան հանձնել է Ընտրող հանձնաժողովի համանախագահ, հայտնի դերասան Ջորջ Քլունին, որը հենց այդ նպատակով ապրիլի 22-ին ժամանել է Հայաստան:

Բուրունդիի Խաղաղության Տուն (Maison Shalom) խնամքի տան եւ REMA հիվանդանոցի հիմնադիրը ճանաչման արժանանալով այն բացառիկ ազդեցության համար, որ Բուրունդիի քաղաքացիական պատերազմի տարիներին ունեցել է՝ հազարավոր կյանքեր փրկելով եւ խնամելով որբերին ու փախստականներին:

Ընտրող հանձնաժողովի համանախագահ Ջորջ Քլունիից ընդունելով «Ավրորա» մրցանակը՝ Մարգարիտ Բարանկիցեն ասաց. «Մեր արժեքները մարդկային արժեքներն են: Երբ դուք ունեք կարեկցանք, արժանապատվություն ու սեր, ապա ոչինչ չի կարող վախեցնել ձեզ, ոչինչ եւ ոչ ոք չի կարող կանգնեցնել ձեզ: Որեւէ բան չի կարող հաղթել սիրուն՝ ոչ բանակները, ոչ ատելությունը, ոչ հետապնդումները, ոչ սովը. ոչինչ»:

Որպես «Ավրորայի» դափնեկրի Բարանկիցեն շնորհվելու է 100,000 ԱՄՆ դոլարի պարգև, իսկ դափնեկիրն ինքը շարունակելու է նվիրատվության շղթան՝ ուղղորդելով

Լույս Ամսագիր

1,000,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհն այն կազմակերպություններին, որոնք ոգեշնչել են իրեն՝ գործելու: Մարգարիտ Բարանկիցեն նախատեսում է նվիրատվություն ուղղել երեք կազմակերպությունների՝ մարդասիրական օգնության, որբերին խնամելու եւ երեխաների աղքատության դեմ պայքարելու նպատակով: Դրանք են՝ Fondation du Grand-Duc et de La Grande-Duchesse du Luxembourg (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսի եւ Մեծ Դքսուհու հիմնադրամ), Fondation Jean-François Peterbroeck («Ժան-Ֆրանսուա Պետերբրոկ» հիմնադրամ) եւ Fondation Bridderlech Deelen Luxembourg («Բրիդերլեխ Դելեն» հիմնադրամ):



«Ես ընտրել եմ այս կազմակերպությունները, որովհետեւ նրանք աջակցում են ինձ եւ երեք չեն լրում՝ նույնիսկ դժվարին ժամանակներում: Նրանք նույն սկզբունքն ունեն, ինչ ես եւ Մեզոն Շալոմը՝ կարեկցանք, բարյացակամություն, արժանապատվություն եւ մեծահոգություն», - ասաց Բարանկիցեն:



«Մարգարիտ Բարանկիցեն մեզ հիշեցնում է, որ նույնիսկ անհաղթահարելի թվացող հալածանքների եւ անարդարության հանդիպելիս, մեկ մարդն անգամ մեծ ազդեցություն կարող է ունենալ,- ասաց Ընտրող հանձնաժողովի համանախագահ Ջորջ Քլունին եւ շարունակեց,- տեսնելով Մարգարիտ Բարանկիցեի խիզախությունը, կամքն ու նվիրվածությունը, ես հուսով եմ, որ նա կարող է ոգեշնչել մեզին յուրաքանչյուրին մտածելու, թե ինչ մենք կարող ենք անել հանուն նրանց, ում իրավունքները ոտնահարվում են եւ ովքեր մեր աջակցության կարիքն ունեն»:

Մարգարիտ Բարանկիցեն Բուրունդիի քաղաքացիական պատերազմի տարիներին հազարավոր կյանքեր է փրկել ու խնամել որբերին ու փախստականներին: 2008 թվականին նա հիմնել է հիվանդանոց, որում մինչ օրս բժշկական օգնություն է ստացել 80,000 մարդ:

Հյուրերը մեծարանքի են արժանացրել նաեւ մրցանակի մյուս երեք հավակնորդներին՝ Թոմ Բաթինային (Մուդանի Նուբա լեռների «Գթության Մայր» հիվանդանոց), Մայիդա Դուլամ Ֆաթիմային (Պակիստանի «Կախյալ շահագործվողների ազատագրության ճակատ») գլխավոր քարտուղար, եւ Հայր Բերնարդ Կինվին (Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության Բոսեմտեղե քաղաքի կաթոլիկ միսիայի վանահայր): Նրանք 25.000 ԱՄՆ դոլար նվիրատվություն կստանան՝ ուղղելու այն կազմակերպություններին, որոնք ոգեշնչել են նրանց:



«Ավորա» մրցանակի շնորհման արարողությանը ներկա են եղել նաեւ մարդասիրության ասպարեզի առաջատարներ եւ «Ավորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամներ Գարեթ Էվանսը, Հինա Ջիլանին, Լեյմա Գրովեն, Շիրին Էբադին եւ Վարդան Գրեգորյանը:

Արարողության ընթացքում ելույթներ են ունեցել 100 LIVES եւ Aurora Prize նախաձեռնության համահիմնադիրներ Վարդան Գրեգորյանը, Նուբար Աֆեյանը եւ Ռուբեն Վարդանյանը:

Արարողությունը վարել են օպերային երգչուհի Հասմիկ Պասյանը եւ Washington Post թերթի պոլոնակագիր, գրող եւ հրապարակախոս Դեվիդ Իզնատիուսը:

Արարողությանը ներկա են եղել ՀՀ նախագահ Սերժ Մարգարյանը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն:

Նշենք, որ Aurora Prize մրցանակաբաշխությունը ստեղծվել է, որպեսզի Ցեղասպանությունը վերապրած բոլոր հայերի անունից շնորհակալություն հայտնի փրկիչներին: Հայրուր տարի առաջ նրանց դրսևորած քաջության հիշատակին մրցանակով պարգևատրվելու են ժամանակակից հերոսները, որոնք վտանգում են իրենց կյանքը հանուն ուրիշների փրկության:

«Ավորա» մրցանակը շնորհելով՝ 100 LIVES նախաձեռնությունը ճանաչման է արժանացնում մերօրյա հերոսներին, որոնք անձնվիրաբար օգնում են մարդկանց: Այն հիմնել են հայ գործարարներ Ռուբեն Վարդանյանը, Նուբար Աֆեյանն ու Կարնեզի կորպորացիայի նախագահ Վարդան Գրեգորյանը:

Գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադյանն ազատվել է ՀՀ զինված ուժերի կապի զորքերի պետի պաշտոնից

26.04.2016



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կապի զորքերի պետի պաշտոնից:

Նախագահի մամուլի գրասենյակից NEWS.am-ին հայտնում են, որ նախագահի հրամանագրում, մասնավորապես ասվում է.

«Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով Չինվորական ծառայություն անցնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ որոշում եմ.

Գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադյանին ազատել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կապի զորքերի պետ-կապի և ավտոմատացված կառավարման համակարգերի վարչության պետի պաշտոնից»:

Սերժ Սարգսյանը պաշտպանության փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանին ազատել է պաշտոնից

13:57, 26.04.2016



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Ալիկ Միրզաբեկյանին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման ղեկավարամենտի պետի պաշտոնից ազատելու մասին:

Նախագահի մամուլի գրասենյակից NEWS.am-ին հայտնում են, որ նախագահի հրամանագրում ասվում է.

«Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի 125-րդ կետը՝ որոշում եմ.

Ալիկ Միրզաբեկյանին ազատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման ղեկավարամենտի պետի պաշտոնից», - ասված է նախագահի հրամանագրում:

ՀՀ Չինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետն ազատվել է պաշտոնից

13:56, 26.04.2016




ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Արշակ Կարապետյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետի պաշտոնից:

Նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ հրամանագրում նշված է. «Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով Չինվորական ծառայություն անցնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ որոշում եմ.

Գեներալ-մայոր Արշակ Կարապետյանին ազատել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետի պաշտոնից»:

ԱՄՆ Հյուսիսային Վիրջինիա նահանգը ճանաչեց Հայոց Ցեղասպանությունը

01:22, 04.05.2016



Հյուսիսային Վիրջինիան դարձավ Միացյալ Նահանգների 44-րդ նահանգը, որը ճանաչել է Հայոց Ցեղասպանության փաստը, հայտնում է Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը: Համապատասխան հռչակագիր է ընդունել Հյուսիսային Վիրջինիայի նահանգապետ Էրլ Ռեյ Թոմբլինը, ով 2016-ի ապրիլ ամիսը հայտարարել է նահանգում ցեղասպանության հիշատակի և կանխարգելման ամիս:

Վկայակոչելով 1915-1923 թվականներին մեկ եւ կես միլիոն հայերի եւ մեկ միլիոն հույների եւ ասորիների սպանությունը, ինչպես նաեւ մեր օրերին Մերձավոր Արեւելքում կատարվող քրիստոնյաների, եղիների եւ այլ փոքրամասնությունների ոչնչացումը, նահանգապետ Թոմբլինն իր հռչակագրում նշում է. «Ճանաչելով եւ մշտապես հիշելով Հայոց ցեղասպանությունն ու Ողջակիզումը, ինչպես նաեւ բոլոր անցյալի եւ ներկայի ցեղասպանությունները, մենք պահպանում ենք պատմական հիշատակը, երաշխավորում, որ նման

դաժանությունները չեն կրկնվելու, եւ զգոն մնում ատելության, հայաժանքի եւ բռնության հանդէպ»:
Տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ Համբարձում Կասպարյանը, Նենսի եւ Էմի Թոլիվերները կարելուք դեր խաղացին հռչակագրի ընդունման գործընթացում: «1915-ին իմ պապ Համբարձումը, ով Անկարայում ցորենի վաճառքով զբաղվող հաջողակ գործարար էր, կեսգիշերին տնից բռնի կերպով տարվել եւ գլխատվել էր: Նույնն արվել էր բազմաթիվ այլ, ավելի կիրթ եւ հաջողակ հայերի հետ, ովքեր բնակվում էին Թուրքիայում», - պատմում է Համբարձում Կասպարյանը, - «Իմ պապը շատ բարի եւ մեծահոգի մարդ էր: Երաշտի տարիներին նա բազմաթիվ մարդկանց սննդով էր ապահովում: Հույս ունեւ, որ Հյուսիսային Վիրջինիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը որոշ չափով երաշխիք կլինի, որ նման սարսափելի իրադարձություններ այլ մարդկանց հետ չեն կատարվի»:

Արեւմտյան Հայաստան

Թուրքիայի մեջլիսում ինձ վրա հարձակումը ծրագրված էր նախօրոք. Կարո Փայլան

15:54, 03.05.2016

Թուրքիայի խորհրդարանում Սահմանադրական հանձնաժողովի նիստում ինձ վրա հարձակումը կապված էր իմ հայ լինելու հետ: Նման հայտարարություն է արել քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը:

Թուրքական Bianet.org-ի հետ զրույցում Կարո Փայլանը պատմել է, որ իր վրա հարձակումը նախօրոք ծրագրված է եղել: Նա շեշտել է, թե իշխող կուսակցության անդամները իր վրա հարձակվել են միայն այն բանի համար, որ ինքը ասել է, թե համաձայն չէ իրենց պնդման հետ:

«15 հոգով փորձեցին ինձ հետ ինքնադատատան տեսնել: 20-30 վայրկյանում 100 հարված են ինձ հասցրել: Հարձակումը կապված էր իմ հայ լինելու եւ մարդու իրավունքների պաշտպան լինելու հետ:

Ամեն ինչ տեսագրության մեջ պարզ երեւում է: Դատի չեմ տալու, քանի որ դրական բան չեմ սպասում: Տեղի ունեցածը թողնում եմ հասարակության խղճին:

Նշենք, որ Թուրքիայի խորհրդարանում քրդերին պատգամավորական անձեռնմխելությունից զրկելու օրինագծի քննարկումների ժամանակ իշխող կուսակցության պատգամավորները 3 օր շարունակ հարձակվել են քուրդ պատգամավորների վրա: Իսկ մայիսի 3-ին իշխող կուսակցության անդամների գլխավոր թիրախը եղել է Կարո Փայլանը:

Ֆաշիստները վախկոտ են ու կարող են խմբով միայն մեկի վրա հարձակվել. Կարո Փայլան

00:04, 04.05.2016

Իստորեն դատապարտում եմ հայ լինելու համար խորհրդարանում իմ նկատմամբ ստոր հարձակումներն ու ռասիստական հայտարարությունները: Սոցկայքերում նման տողեր է գրել Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության պատգամավոր Կարո Փայլանը:

«Փիզիկական բռնությանը զուգահեռ իմ հայ ինքնությանն ուղղված վիրավորական խոսքեր են ասել «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պատգամավորները:

Չմոռանանք, որ ֆաշիստները վախկոտ են, նրանք միայն խմբով միայնակի վրա կարող են հարձակվել»,-գրել է Կարո Փայլանը:

Նշենք, որ Թուրքիայի խորհրդարանում քրդերին պատգամավորական անձեռնմխելությունից զրկելու օրինագծի քննարկումների ժամանակ իշխող կուսակցության պատգամավորները 3 օր շարունակ հարձակվել են քուրդ պատգամավորների վրա: Իսկ մայիսի 3-ին իշխող կուսակցության անդամների գլխավոր թիրախը եղել է Կարո Փայլանը:

«Մոռացված ցեղասպանություն». Եփրատ գետում Ջուհարը հայ աղջիկների կտրված ձեռքեր եւ ոտքեր էր տեսել

00:51, 17.04.2016

Հայոց ցեղասպանությունը հաճախ անվանում են «մոռացված ցեղասպանություն»: 1915-1923թթ. սպանվել է 1.5 մլն հայ: Ջուհար Քաջիկյանի մայրը՝ Ջուհարը, ստիպված էր վերապրել դաժան «մահվան երթերը» եւ անկարագրելի սարսափները: Նրա հայրը՝ Մարգար, տեսել էր, թե ինչպես են գլխատում իր եղբորը: Այս մասին [Idaho Statesman](#) պարբերականում գրում է Քեթրին Չոնսը:

Ջուհարը երգվել էր պատմել իր պատմությունը եւ մյուսերին տեղյակ պահել ցեղասպանության մասին: Նա հույս ունի, որ հիշելով հայ ժողովրդի ողբերգական անցյալը՝ մարդիկ կխուսափեն նման հանցագործությունները կրկնելուց:

Ամեն տարվա ապրիլի 24-ին Ջուհար Քաջիկյանը, ծաղիկները ձեռքին, կանգնում է Ann Morrison Park-ի կամուրջների վրա: Եվ նա միայնակ չէ: Նրան են միանում 100 մարդ, որոնք ամեն տարի այդ օրը հավաքվում են այդտեղ:

Ջուհարը 41 տարեկան էր, երբ լսեց իր մոր պատմությունը: «Ես չէի կարողանում հավատալ, թե ինչ է պատմում մայրս: Ես շոկի մեջ էի», - ասում է Ջուհարը, ով տեսագրել է իր ընտանիքի սարսափելի պատմությունը, որը պատմել է մայրը:

Ջուհարի մայրը՝ Ջուհար Քոփյանը, 12 տարեկան էր: Նա իր մեծ ընտանիքի հետ ապրում էր Թուրքիայի Հարփուշ քաղաքում: Նրանց քրիստոնյա ընտանիքը, մյուս հայերի նման, չնայած երկրորդ կարգի մարդիկ էին համարվում, բայց դարեր շարունակ Օսմանյան կայսրությունում միասին էին ապրում մուսուլմանների հետ:

1915թ. ապրիլի 24-ին Թուրքիայի կառավարությունը մահապատժի ենթարկեց 300 հայ պատվորականների՝ հայերին մեղադրելով Թուրքիայի դեմ Ռուսաստանին աջակցելու մեջ: Հաջորդ օրը սկսվեց շարդերի ալիքը, որի հետեւանքով բնաջնջվեց հայ բնակչության 2/3-ը:

Ջուհարը եւ նրա հորաքույրը ընտանիքում միակ մահից փրկվածներն էին: «Մայրս պատմում էր, թե ինչպես զինվորականները տարան նրա հորը, եղբայրներին եւ քաղաքի մյուս բոլոր տղամարդկանց: Նրանց ասել էին, թե տանում են բնակչության նոր վայր: Դրանից քիչ անց նա կրակոցներ էր լսել», - պատմում է Ջուհար Քաջիկյանը:

Աղջիկները հաց էին թխում, երբ լսեցին, որ թուրք զինվորները վերադառնում են: Ջուհարը ցատկել էր ցորենի ամբարի մեջ եւ թաքնվել՝ ողջ գիշեր դողալով վախից: Հաջորդ օրը ժանդարմը գտել էր նրան եւ հրամայել միանալ «մահվան երթին»: Ջուհարին եւ նրա հորաքույրը բաժանել էին, եւ նրանք այլեւս չհանդիպեցին երբեք:

Մոտ երկու տարի Ջուհարը ընտանիքներից կտրած կանանց, երեխաների եւ ծերունիների քարավանի մի մասն էր, որոնք քայլում էին սարերով եւ Միրիայի անապատներով: Ջուհարը Ջուհարին պատմել էր, որ

ժանդարմները, որոնք ձի հեծած էին գնում, երբեմն իրենց հաց էին նետում: «Ժամանակ առ ժամանակ նա զգում էր, որ ավելի լավ է մեռնել»,- ասում է Ջոանը:

Տարեցներին և հիվանդներին, որոնք չէին կարողանում շարունակել ճանապարհը, թողնում էին ճանապարհին մեռնելու: Մայրերը, որոնք ի վիճակի չէին այլևս տանել իրենց երեխաներին, նրանց տալիս էին անձանոթ մարդկանց: Մյուսները՝ հուսահատության և խելագարության մեջ, երեխաներին գետն էին նետում և իրենք էլ նետվում ջուրը: «Երբ մայրս խնում էր Եփրատ գետի ջուրը, նա հայ աղջիկների անդամահատված ոտքեր և ձեռքեր էր տեսել, որոնք ջուրը ափ էր հանել»,- պատմում է Ջոանը:

Մարդկանց քարավանը շարժվում էր դեպի մեծ համակենտրոնացման ճամբար՝ Դեր Չորի անապատի բաց երկնքի տակ: Ջուհարի կյանքը փրկում է թուրքերից մեկը: Նրան վաճառում են ստրկության, սակայն Ջուհարը ողջ է մնում: Նրան գրկում են հայկական ինքնությունից, արգելում են հայերեն խոսել, թուրքական անուն են տալիս: «Բայց նա չէր բողոքում, ասում էր, որ այդ թուրքը իր փրկիչն է... Ես ուզում եմ, որ նրա պատմությունը լսեն իմ երեխաները, աշխարհը... Ես ուզում եմ դառնալ ձայնը այն մարդկանց, որոնց ձայնը լռեցվել էր»,- ասում է Ջոան Բաջիկյանը:

Թուրքիայի մեջլիսում հայտնվել են 1915-ին կոտորված հայ պատգամավորների լուսանկարները

00:04, 22.04.2016

Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության պատգամավոր Կարո Փայլանը խորհրդարանում քրդական կուսակցության պատգամավորների սեղաններին է տեղադրել Յեդասպանության ժամանակ զոհված Թուրքիայի մեջլիսի հայ պատգամավորների լուսանկարները:

Կարո Փայլանը խորհրդարանում HDP-ի սեղանների վրա տեղադրել է 1908-1915 թվականներին մեջլիսի 6 հայ պատգամավորների լուսանկարները և Twitter-ում գրություն թողել. «1915-ին ձերբակալված և կոտորված հայ պատգամավորները 101 տարի հետո կրկին մեջլիսում են»:



Թուրքիայի 3 հայ պատգամավորները մասնակցել են 1915-ի զոհերի հիշատակի պատարագին

09:01, 25.04.2016



Մրանից 101 տարի առաջ՝ 1915-ի ապրիլի 24-ին, Ստամբուլում և Անատոլիայի չորս կողմերից հավաքված հայ մտավորականներին, արվեստագետներին ու գործիչներին արքայի ուղարկեցին անհայտ ուղղությամբ: Նման տողեր է գրել Ֆեյսուրի իր էջում Թուրքիայի «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության հայ կին պատգամավոր Սելինա Դոդանը:

«101 տարի անցել է: Չոհվածներին չենք մոռացել, չենք մոռանալու: Հայոց պատրիարքարանում կազմակերպված պատարագին մասնակցել են «Արդարություն և զարգացում» կուսակցության պատգամավոր Մարգար Եսայանը, «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության պատգամավոր Կարո Փայլանը»,-գրել է Սելինա Դոդանը:





Քացառիկ լուսանկար՝ Վանի հերոսամարտից
17:34, 26.04.2016




Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածուն համալրվել է Վանի հերոսամարտի բացառիկ մի բնօրինակ լուսանկարով, որը ներկայացնում է 1915 թ. ապրիլյան հերոսամարտի մասնակիցներին և վերջիններիս կողմից թուրքական կանոնավոր բանակից 101 տարի առաջ ճիշտ այս օրերին առգրավված հրանոթները: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը:

«Այս լուսանկարը, որն արվել է Վանում գտնված ամերիկացի բժիշկ միսիոներների կողմից, ժամանակին տպագրվել է ամերիկյան մամուլում, սակայն բնօրինակը համարվում էր կորած», - նշել է նա:

Հայաստանցի կինը Վանում տուն է գնել

16:05, 29.04.2016



Իմ երազանքը իրականացել է, քանի որ ես Վանում տուն եմ գնել: Ստամբուլի հայկական «Ակոս»-ի հետ գրույցում պատմել է Գայանե Գեւորգյանը:

Գայանե Գեւորգյանը նշել է, որ Վան է տեղափոխվել 2015-ի հուլիսից եւ վերջին ժամանակներում իր հանդեպ ուշադրությունը մեծացել է: Նա պատմել է, որ ծնվել, մեծացել եւ աշխատել է Հայաստանում, սակայն հետագայում տեղափոխվել է որոշ ժամանակով Ուկրաինա եւ նորից Հայաստան: Գայանեն շեշտել է, թե 8 տարի աշխատել է Թուրքիայում:

«Միշտ երագում էի Վանում տուն ունենալ եւ Ստամբուլում ծանոթացա վանեցի մի ընտանիքի հետ ու առաջին անգամ նրանց հետ գնացի Վան: Իմ տատը Վանի Ոստանից, իսկ պապը՝ Էրզրումից է եղել, սակայն ես Վանը ավելի հավանեցի: Վանում արդեն տուն ունեմ, եւ իմ բարեկամներին ու ընկերներին կիրավիրեմ ու ցույց կտամ Վանը: Մա մեր հայրենիքն է», -ասել է Գայանեն:

Նա նաեւ շեշտել է, թե ինքը երկրադաքացի է, սակայն Կադաստրում իրեն ասել են, թե եթե միայն Հայաստանի քաղաքացի էլ լիներ, կրկին խնդիր չէր լինի բնակարան գնելու մեջ:

Միյուռք

Իսրայելի հայ համայնքը պահանջում է, որպեսզի Իսրայելը զենք չվաճառի Ադրբեջանին

21:33, 11.04.2016



Իսրայելի հայկական համայնքը դատապարտում է Իսրայելի՝ Ադրբեջանին ռազմական զենք վաճառելու քայլը: Երուսաղեմի Հայոց պատրիարքության դիվանապետ հայր Կորյունը նշեց, որ ապրիլի 14-ին Երուսաղեմի միացյալ հանձնախումբը Իսրայելի Արտաքին գործերի նախարարության շենքի մոտ կազմակերպել է ցույց, որով Իսրայելից պահանջելու են դադարեցնել Ադրբեջանին զենք վաճառելը:

«Մենք դատապարտում ենք եւ պահանջում, որպեսզի Իսրայելը դադարեցնի Ադրբեջանին զենք վաճառելը: Այդ պահանջով ապրիլի 14-ին Իսրայելի Արտաքին գործերի նախարարության շենքի մոտ ցույց ենք անելու, որի ընթացքում Իսրայելի հայկական համայնքի կողմից պաշտոնապես նամակ ենք փոխանցելու Իսրայելի նախագահին եւ վարչապետին», -ասաց նա:

Հայր Կորյունը նշեց, որ ապրիլի 8-ին, Իսրայելում տեղի է ունեցել նաեւ համահայկական հավաք, որի ընթացքում Ադրբեջանին զենք վաճառելու վերաբերյալ դատապարտող ելույթներ են հնչել, դարաբաղա-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած քառօրյա պատերազմի ընթացքում զոհված հայ զինծառայողների օրինության կարգ է տեղի ունեցել եւ մոմավառություն՝ Հայոց ցեղասպանության հուշարձանի մոտ: Հայր Կորյունը նաեւ նշեց, որ տեղի է ունեցել դրամահավաք՝ Արցախին օգնելու նպատակով:

Սիրիայի խորհրդարանում հայ համայնքը կներկայացնի երկու պատգամավոր

11:15, 17.04.2016



Սիրիայում խորհրդարանական ընտրությունների արդյունքում այդ երկրի հայ համայնքը խորհրդարանում կունենա երկու պատգամավոր: Հայ առաքելական եկեղեցու Բերիո թեմի մամուլի ծառայության փոխանցմամբ, Սիրիայի խորհրդարանում հայ համայնքը կներկայացնեն Ժիրայր Ռեիսյանը եւ Նորա Արիսյանը:

Սիրիայի պետական ՍԱՆՄ գործակալությունը հայտնում է, որ Սիրիայի ընտրությունների բարձրագույն դատական կոմիտեն հայտարարել է երկրի խորհրդարանի ընտրությունների արդյունքները, որոնք կայացել են ապրիլի 13-ին:

Կոմիտեի նախագահ Հիշամ աշ-Շաարը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է յուրաքանչյուր նահանգից վերընտրված պատգամավորների անունները: Նրա խոսքով, ընտրելու իրավունք ունեցող 8 834 994 քաղաքացիներին քվեարկությանը մասնակցել է 5 085 444-ը: Այսպիսով, ընտրություններին մասնակցությունը կազմել է 57,56 տոկոս:

Դամասկոսի արվարձաններում հալեպահայ զինծառայող է զոհվել

07 Ապրիլի 2016 - 11:11

Դամասկոսի արվարձաններից մեկում ապրիլի 6-ին զոհվել է սիրիական կառավարական բանակի զինծառայող, հալեպահայ Ռաֆֆի Գազեզյանը, այս մասին տեղեկանում ենք «Գանձասար» պարբերականից:

Հանգուցյալի դիակն այսօր կուղարկվի Հալեպ:

ՀՀ հյուպատոսը Քեսաբում եւ Լաթաքիայում մի քանի տասնյակ հայերի ՀՀ անձնագրեր է բաժանել

16:10, 19.04.2016



Ապրիլի 15-18-ը Սիրիայի ծովափնյա շրջանների հայությանը հյուպատոսական ծառայություններ

մատուցելու նպատակով Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Տիգրան Գեւորգյանն աշխատանքային այցով մեկնեց Լաթաքիա եւ Քեսաբ:

ԱԳՆ-ից NEWS.am-ին հայտնում են, որ այցի ընթացքում գլխավոր հյուպատոսը հանդիպել է տեղի ազգային իշխանությունների ներկայացուցիչներին, որոնց հետ հանգամանորեն քննարկել է համայնքին հուզող խնդիրների լայն շրջանակ:

Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսության աշխատակիցները Լաթաքիայի Հայոց Ազգային Առաջնորդարանում եւ Քեսաբի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի հայության համար անցկացրել են հյուպատոսական ընդունելություն, որի ընթացքում հանձնվել են ՀՀ քաղաքացու՝ մի քանի տասնյակից ավելի անձնագրեր, ինչպես նաեւ ընդունվել են 120-ից ավելի քաղաքացիության նոր դիմումներ:

Ապրիլի 18-ին Տիգրան Գեւորգյանը Քեսաբի Սուրբ Աստվածածին եկեղեցու «Սահակյան» սրահում քեսաբահայության հոծ բազմության ներկայությամբ Քեսաբի քաղաքապետ Վազգեն Չափարյանին է հանձնել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից շնորհված «Միիթար Գոշ» շքանշանը:

Քեսաբի քաղաքապետը, շնորհակալություն հայտնելով ՀՀ նախագահի կողմից նման բարձր պարգևի արժանանալու համար, նշել է, որ այդ շքանշանը ոչ միայն իրենն է, այլ ողջ քեսաբահայությանը:

Թեհրանում Հայոց ցեղասպանության 101-ամյակի կապակցությամբ բողոքի ակցիա է կայացել

00:10, 25.04.2016

Թեհրանում Հայոց ցեղասպանության 101-ամյակի կապակցությամբ բողոքի ակցիա է կայացել:

Յուզարարները հավաքվել են Սուրբ Սարգսի եկեղեցու մոտ եւ Թուրքիային կոչ են արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաեւ դատապարտել են Լեռնային Ղարաբաղում բռնության անը:

«Մենք ուզում ենք, որ նրանք ճանաչեն ցեղասպանությունը, մենք հետ ենք ուզում Արեւմտյան Հայաստանի հողերը: Թուրքիան պետք է 1.5 մլն սպանված հայերի համար ռեպատրիացիա վճարի», - ասել է Արփիկ Էրեյզյանը:



Լոս Անջելեսում 60-հազարանոց բողոքի ցույց է տեղի ունեցել Թուրքիայի հյուպատոսության մոտ

11:43, 25.04.2016

Լոս Անջելեսում ավելի քան 60 հազար մարդ է հավաքվել Թուրքիայի հյուպատոսության մոտ, որոնք իրենց բողոքն են հայտնել Անկարայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության դեմ եւ նշել են Ցեղասպանության 101-ամյակը: Այս մասին հայտնում է Asbarez-ը:



Ցույցին, որը կազմակերպել էր Հայոց ցեղասպանության հանձնաժողովը, մասնակցել են հայկական համայնքի անդամները, ամերիկահայ երիտասարդության ներկայացուցիչներ, դաշնային եւ տեղական իշխանության մարմինների մի քանի տասնյակ ներկայացուցիչներ: Նրանք արդարություն պահանջող բացականչություններ են վանկարկել:

Ցույցի ժամանակ ելույթ են ունեցել ԱՄՆ կոնգրեսականներ Ադամ Շիֆը, Լորետա Սանչեսը եւ Թոմի Բադենապը, Քալիֆորնիայի նահանգի ասամբլեայի անդամներ Սքոթ Վիլքը, Ադրին Նազարյանը եւ Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի անդամներ Փոլ Գրեգորյանն եւ Փոլ Բորեցը:



Շվեդիայում հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

18:15, 25.04.2016



Ապրիլի 24-ին Շվեդիայում տեղի ունեցան Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված մի շարք միջոցառումներ:

Ստոկհոլմում տեղի ունեցավ երթ դեպի Թուրքիայի դեսպանություն, որի ավարտին մասնակիցները կենտրոնական Կունգստրեգորդեն զբոսայգում գտնվող Սբ. Յակոբ եկեղեցում մասնակցեցին Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված սուրբ պատարագին: Արարողությանը ներկա էին Շվեդիայում ՀՀ դեսպան Արտակ Այիսոնյանը, հայ համայնքի կառույցների ներկայացուցիչներ:

Պատարագին հետևեց շվեդահայ համայնքի ներկայացուցիչների կողմից կազմակերպված հիշատակի միջոցառումը՝ ցույց Ստոկհոլմի կենտրոնական Մերգելս Տոյլ հրապարակում:

Տարելիցին նվիրված միջոցառումներ տեղի ունեցան նաև Սյոդերթելյե, Օրերրո, Նորշյոփինգ, Գոտեբորգ եւ Մալմյո քաղաքներում: Սյոդերթելյեի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցում կազմակերպված միջոցառմանը ներկա էր քաղաքապետ Բոել Գոդները: Վերջինս իր ելույթում անդրադարձավ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցին:

Օրերրոյում տեղի ունեցած միջոցառումը սկսվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին ծաղկեպսակի զետեղման արարողությամբ: Ելույթ ունեցան Շվեդիայի խորհրդարանի պատգամավոր Էվա-Լենա Յանսոնը եւ Խորհրդարանի նախկին պատգամավոր, Օրերրոյի համայնքային խորհրդի անդամ Մուրադ Արթինը: Միջոցառումը շարունակվեց եկեղեցում, որտեղ ելույթ ունեցավ Օրերրոյի քաղաքապետ Ազնետա Բյոմը:



Միդնեյում Ցեղասպանության հիշատակի երթ Է կայացել

14:18, 25.04.2016



Միդնեյի հայկական համայնքը ապրիլի 24-ին արդարության երթ (#MARCHFORJUSTICE), Է կազմակերպել՝ ի հիշատակ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության զոհերի: (Փոտոռեպորտաժ)

Երթին մասնակցել են հայ առաքելական եկեղեցու, քաղաքական շրջանակների, երիտասարդության, մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև դպրոցների աշակերտներ և պարային համայնքներ:

Համաշխարհային մամուլ. Չորջ Քլունին Հայոց ցեղասպանության ճանաչման նվիրյալ ջատագով է

14:09, 25.04.2016



Չորջ Քլունին՝ միջազգային «Ավորա» մրցանակաբաշխությանը մասնակցելու նպատակով Երևան այցելությունը համաշխարհային շատ պարբերականների և լրատվական գործակալությունների թեման է դարձել:

Ամերիկացի դերասան Չորջ Քլունին հայերի հետ ոգեկոչել է օսմանյան թուրքերի կողմից 1,5 մլն հայերի սպանության 101-րդ տարելիցը, գրում է Associated Press-ը:

Գործակալությունը նշում է, որ Քլունին արտահայտվել է այն երկրների օգտին, որոնք սպանությունները որպես ցեղասպանություն են ճանաչել, ինչը չեն արել Միացյալ Նահանգները:

France Presse գործակալությունը Քլունին անվանում է «գանգվածային սպանությունները որպես ցեղասպանություն ճանաչելու համոզված ջատագով», ընդգծելով, որ դերասանը մասնակցել է «Երևանում հուզական միջոցառումներին»:

Քլունին Հոլիվուդի 54-ամյա աստղը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և երգիչ Շառլ Ազնավուրի հետ ծաղիկներ է դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ, գրում է Deutsche Welle-ն: Համաշխարհային լրատվամիջոցները մանրամասն նկարագրել են Քլունինի ելույթը, որը նա արտասանել էր մրցանակաբաշխության ժամանակ և հայտարարել, որ ինքը միգրանտների սերունդ է:

«Չորջ Քլունին Հայաստանում մարդասիրական կոնֆերանսի ժամանակ նկարագրել է, թե ինչպես է իր ընտանիքը փրկվել սովից՝ կոչ անելով աշխարհին հիշել, որ փախստականները նույնպես մարդիկ են, ինչպես բոլորը», - գրում է The Telegraph-ը:

Պարբերականը հիշեցնում է, որ Քլունին նշել է, որ դահիճում բոլոր ներկաները ինչ-որ մի մարդու թանկ արարքի արդյունք են:

Ստամբուլի կենտրոնում հարգել են Ցեղասպանության զոհերի հիշատակը

23:08, 24.04.2016



Ստամբուլի կենտրոնական Թուրքիայի հրապարակում ապրիլի 24-ի երեկոյան Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո միջոցառում է տեղի ունեցել:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, սգո միջոցառմանը մասնակցել են ռասիզմի դեմ պայքարի եվրոպական միությունը (EGAM), Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, հայտնի լրագրողներ, մտավորականներ, փաստաբաններ և պատգամավորներ:

Հավաքվածների անունից ելույթով հանդես է եկել թուրք գործիչ Էմել Քուրման՝ շեշտելով, որ 1915-ին ֆիզիկապես ոչնչացվել է 1,5 մլն հայ, իսկ ապրիլի 24-ը այդ կոտորածների սկզբի ամսաթիվն է: «Ցեղասպանությունը սարսափելի հանցանք է, սակայն այդքան սարսափելի հանցանք էլ այդ ամենը ժխտելն է: Պահանջում ենք, որ պետությունը հայերից ներողություն խնդրի և առերեսվի Ցեղասպանության իրողության հետ», -ասել է Էմել Քուրման:

Լիբանանում Ցեղասպանության հիշատակի միջոցառումներ են կայացել

19:23, 24.04.2016



Լիբանանում ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 101-ամյակի կապակցությամբ հիշատակի միջոցառումներ են կայացել:

Ակցիայի մասնակիցները Անտիլիասի հրապարակից երթով քայլել են դեպի քաղաքի գլխավոր պողոտա:

Երթին մասնակցել են որոշ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պատգամավոր Հակոբ Բագրատունյանը, սոցիալական հարցերի նախկին նախարար Մայիմ ալ Մայեդը եւ Հայրենասերների ազատ շարժման անդամ, պատգամավոր Իբրահիմ Քանանը, հայտնում է The Daily Star-ը:

Լիբանանահայ երիտասարդները նաեւ բողոքի ակցիա էին կազմակերպել Բեյրութում Թուրքիայի դեսպանատան առջև:

Հունաստանի հայերը երթ են իրականացնում դեպի Թուրքիայի դեսպանատուն

14:53, 24.04.2016



Հունաստանի հայերը հանուն արդարության երթ են կազմակերպել դեպի Աթենքում Թուրքիայի դեսպանատուն, հայտնում է AYP Greece-ը:

Ցուցարարները պաստառներ են պահում, որոնք հիշատակում են Օսմանյան Թուրքիայում 1.5 մլն հայերի սպանությունը:

Մասնակիցները նաեւ բազմաթիվ մետրերի երկարություն ունեցող հայկական դրոշ են տանում:



Քրդական թերթը հայերեն վերնագրով է լույս տեսել. Ցեղասպանությունը շարունակվում է

13:46, 24.04.2016



Թուրքիայի քրդական համարձակ Ozgur Gundem պարբերականի ապրիլի 24-ի համարի առաջին էջի գլխավոր լուրը վերնագրել է հայերենով. «Ցեղասպանությունը շարունակվում է»:

Քրդական պարբերականի գլխավոր էջում Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված հրապարակման մեջ նշվել է, որ Երիտթուրքերի իրականացրած Հայոց ցեղասպանությունը ներշնչեց Հիտլերին՝ իրականացրել հրեաների ցեղասպանությունը: «Ներկայում իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունն էլ հետևում է Երիտթուրքերի գծին՝ քուրդ ժողովրդի դեմ նույն ցեղասպանության հայեցակարգն է կիրառվում», - նշվել է հրապարակման մեջ:

Միջազգային

Ես մի բան կարող եմ ասել Ադրբեջանին՝ դադարե՛ք կրակել, դադարե՛ք կռվել. Ժան Կլոդ Յունկեր

13:51, 19.04.2016



Ես մի բան կարող եմ ասել Ադրբեջանին՝ դադարե՛ք կրակել, դադարե՛ք կռվել: Այս մասին, այսօր՝ ապրիլի 19-ին, ԵՄԽՎ-ում հայտարարել է Եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԵՄԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ, ՀՀԿ-ական պատգամավոր Մամվել Ֆարմանյանը: Նա, մասնավորապես, նշել է. «Եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը հենց հիմա դիմում է ԵՄԽՎ-ին: Ադրբեջանի պատվիրակության անդամ Գանիրա Փաշաևան հարց է տվել ադրբեջանցի ներքին տեղահանվածների եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ: Եվրահանձնաժողովի նախագահը շատ կարճ և պարզ պատասխան տվեց. «Ես մի բան կարող եմ ասել Ադրբեջանին՝ դադարե՛ք կրակել, դադարե՛ք կռվել», ինչին հաջորդեցին Վեհաժողովի անդամների ծափահարությունները»:

Ֆրանկ Էնգել. Եվրոպան նաեւ կրկնակի ստանդարտներ է կիրառում ինքնորոշման հարցում

19:04, 25.04.2016



Ցավոք սրտի, Եվրոպան նաեւ կրկնակի ստանդարտներ է կիրառում: Այդ մասին ապրիլի 25-ի մամուլին ասուլիսին հայտնել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը: «Ես երբեք չեմ հասկացել, թե ինչու որոշակի պետություններ իրավունք ունեն ճանաչված լինելու, իսկ ուրիշները՝ ոչ, չնայած այն փաստին, որ նման պահանջ գոյություն ունի տվյալ պետության բնակչության կողմից», -

ընդգծել է Ֆրանկ Էնգելը, նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանը:

Թուրքիայի մեջլիսում ընդունվել է քուրդ պատգամավորներին անձեռնխելությունից զրկելու օրինագիծը

14:35, 03.05.2016

Տարածաշրջան: [Թուրքիա](#)

Թեմա: [Քաղաքականություն](#)



Թուրքիայի խորհրդարանում 3 կուսակցությունները դավադրաբար կողմ են քվեարկել իրենց քուրդ գործընկերներին անձեռնխելությունից զրկելու օրինագծին:

Թուրքական Demokrathaber-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի խորհրդարանում եռօրյա ժողովուրդների հեռուստաընկերության «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության պատգամավորները լքել են խորհրդարանի դահլիճը, որից հետո իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պատգամավորների առաջարկած օրինագծին կողմ են քվեարկել նաեւ ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» ու «Ազգայնական շարժում» կուսակցությունները:

Նշենք, որ քուրդ պատգամավորներին անձեռնխելությունից զրկելու պատճառը խորհրդարանում նրանց թվի նվազեցումն ու նրանց դերակատարության նվազեցումն է: Քուրդ պատգամավորներին անձեռնխելությունից զրկելու հրահանգը տվել է նախագահ Էրդողանը:

Թուրքիայում խոսում են, որ ազգայնամուլները գնացել են Ադրբեջան՝ գործողություններին մասնակցելու. դերսիմահայ

20:15, 24.04.2016

Թուրքիայում հասարակությունը խոսում է այն մասին, որ մի շարք թուրք ազգայնամուլներ ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին գնացել են Ադրբեջան՝ ռազմական գործողություններին մասնակցելու: Այս մասին [NEWS.am](#)-ին ասաց Դերսիմի հայերի միության նախագահ Ստեփան (Իսմայի) Ջեմ Հալավուրդը:

«Արցախում տեղի ունեցած վայրագությունների մասին Թուրքիայում մարդիկ տեղյակ են, մի մասը վայրագություն համարեց տեղի ունեցածը, բայց ժողովրդի մի մեծ մասն էլ ուրախացավ: Հայ զինվորներին գլխատել են, ինչպես որ Սիրիայիում ԻՊ-ն է մարդկանց գլուխները կտրում: Սա մեսիջ էր միջազգային հանրությանը, որ Թուրքիան կապ ունի Իսլամական պետության հետ», - ասաց նա՝ նշելով, որ իրենց համար արդեն պարզ է, որ Թուրքիան ու Ադրբեջանը գործում են միասին:

Ռուսաստանը չպետք է զենք վաճառի Հայաստանի թշնամուն. Ֆրանկ Էնգել

18:48, 25.04.2016



Եթե մի երկիր ուզում է առանձին պետության բարեկամը լինել, նա չպետք է զենք վաճառի այդ պետության թշնամուն: Հենց դա է հիմա անում Ռուսաստանը: Այս մասին ապրիլի 25-ին կայացած մամուլի ասուլիսին ասել է Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը:

